ՏՐԱՊԻԶՈՆԻ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1916-1917թթ.)

ՌՈՒԲԷՆ ՍԱՀԱԿԵԱՆ

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին Հայոց Ցեղասպանութեան զոհերից էր Տրապիզոն վիլայէթի (նահանգի) եւ համանուն քաղաքի հայ բնակչութիւնը[1]։ *Նրանց որոշ մասին յաջողւում է խուսափել ջարդերից եւ բռնագաղթից ու ապաստանել լեռնային անմատչելի վայրերում։*

1916 *Փետրուարի* 26*ին Բաթումի Ս. Փրկիչ եկեղեցու աւագ քահանայ Մեսրոպ Մելեանը Ս. Էջմիածնի դիւանապետ Տիրայր վարդապետին ուղղուած նամակում յայտնում է, որ Փետրուարի* 6*ի* № 47 *գրութեամբ դիմել է Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին, վերջինիս ուշադրութիւնը հրաւիրելով, որ օրերի խնդիր է Տրապիզոնի գրաւումը եւ անհրաժեշտ է օր առաջ անցնել Տրապիզոն եւ զբաղուել ողջ մնացած հայերի փրկութեամբ*[2]։ *Մեսրոպ քահանան դիւանապետին զեկուցում է, որ Փետրուարի* 21*ին եւ* 25*ին իր նախագահութեամբ տեղի ունեցած յատուկ խորհրդակցութիւններում քննարկուել է Տրապիզոնի եւ Վիլայէթի հայութեանն օգնութիւն կազմակերպելու հարցը։ Խորհրդակցութիւններին մասնակցել են նաեւ նախկին տրապիզոնաբնակ հայեր։ Ինչպէս գրում է քահանան.* «Այս խորհրդակցութիւնը գտաւ անհրաժեշտ նախապատրաստուելու այդ ցանկալի օրի (*Տրապիզոնի գրաւումի - Ռ.Ս.*) եւ վաղ ընդ փոյթ»[3]. *որոշւում է կազմակերպել վեց հոգուց բաղկացած յանձնաժողով, որը Տրապիզոնի գրաւումից յետոյ պէտք է առաջին իսկ առիթով մեկնի քաղաք՝* «Աստծոյ առանձին հրաշքով ողջ մնացած կարիքաւոր հայերին օգնելու, սրանց վիճակագրութիւնը կազմելու եւ կացութեան մասին մեզ ստուգապատում եւ շուտափոյթ տեղեկութիւններ հաղորդելու»[4]։ *Նա միաժամանակ դիմում է Տիրայր վարդապետին, որպէսզի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե.ը գումար տրամադրի այս նպատակի համար։*

Մեսրոպ քահանան դիւանապետի ուշադրութիւնը հրաւիրում է մէկ այլ կարեւոր հարցի՝ տրապիզոնցի հայերի եւ Հայ Առաքելական Եկեղեցու լքեալ գոյքի տնօրինման անհրաժեշտութեանը։ Նա առաջարկում է այդ նպատակի համար լիազօրել հոգեւորականի, որը պէտք է հետեւէր գոյքի տնօրինման առնչուող հարցերին, մինչեւ օրինական տէրերի վերադարձը։ Բացի այդ, անհրաժեշտ է նման լիազօրութիւններ ունեցող անձի համար ստանալ զինուորական եւ քաղաքացիական իշխանութիւնների թոյլտուութիւնը, որպէսզի նա իրաւունք ունենայ այդ հարցերով զբաղուել։

Ըստ աւագ քահանայի ունեցած մասնաւոր տեղեկութիւններին՝ «վերջերս Խոփի, Արխաւիէի, Աթինէի ու Ռիզէի կողմերից մեծ թուով քաղաքս [՝ Բաթում] բերուած գերիներից-թուրքերից առնուած տեղեկութիւններից [պարզւում է որ] կան կենդանի մնացած հայեր ու բոլորն էլ վերին աստիճանի կարիք ունեն հագուստի՝ ճերմակեղէնի, ոտնամանի ու ուտելիքի»։ *Քահանան խնդրում է*

Տիրայր վարդապետին, որպէսզի վերջինս հարց յարուցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի առջեւ՝ գումար տրամադրելու վերը նշուած նպատակի համար[5]։

Իր նամակի վերջում Տէր Հայրը ներկայացնում է Տրապիզոն մեկնելու պատրաստ յանձնախմբի անունները՝ Հմայեակ Ֆեթուաճեան, Երուանդ Շահմիլեան, Գարեգին Ղազարոսեան, Յարութիւն Դաւթեան, Յակոբ Սարեան եւ Միհրդատ Իմերեան[6]։

Փրկուած հայերի մասին առաջին տեղեկութիւնները ստացւում են Ռիզէ քաղաք մեկնած բաթումաբնակ մի խումբ հայերից, որոնց թւում՝ Աշոտ Անտոնեանը, Յարութիւն Զաքարեանը եւ չորս այլ անձեր, որոնք նուէրներ էին տարել ռուս զինծառայողների համար։ Ռիզէում նրանք տեղեկանում են, որ «Տրապիզոնի հայերին կոտորելուց յետոյ, նրանց երեխաներին նաւերով բերել են Ռիզէ մահմեդականների միջեւ բաժանելու համար»[7]։

Փետրուարի 28ին Բաթում վերադարձած Անտոնեանը եւ Զաքարեանը յայտնում են, որ Ռիզէում եւ շրջակայ մահմեդական գիւղերում կան 200*ից աւելի հայ երեխաներ՝* 3*ից մինչեւ* 14 *տարեկան։ Ռիզէ քաղաքի մահմեդականների տներում յայտնաբերւում են* 60 *ծնողազուրկ հայ երեխաներ։ Կան նաեւ որպէս հարճ եւ կին տարուած կանայք ու աղջիկներ։ Այդ կանանցից ու աղջիկներից երկուսին յաջողւում է բերել Բաթում*[8]։

1916 *Փետրուարի* 28*ին կայանում է Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան (ԿՀԲԸ) Բաթումի մասնաճիւղի ժողովը, որն ընտրում է ութ հոգուց - այդ թւում երեք կանանցից - բաղկացած յանձնաժողով։ Վերջինս պէտք է մեկնէր Ռիզէ, հայ որբերին յայտնաբերելու եւ խումբ առ խումբ Բաթում ուղարկելու համար։ Յանձնաժողովի տրամադրութեան տակ է դրւում* 500 *ռուբլի։ Այդ գումարն այնքան էլ բաւարար չէր նշուած առաքելութիւնը կատարելու համար, քանի որ անհրաժեշտ էր Բաթումում վարձել տուն՝ այն կահաւորել ու պատրաստել* 50*ից* 60 *ծնողազուրկ երեխաներ ընդունելու եւ պատսպարելու համար*[9]։ *Կաթողիկոսի հրամանով քահանային փոխանցւում է* 5000 *ռուբլի*[10]։ *Իսկ Փետրուարի* 29*ին քահանան յայտնում է Էջմիածին, որ ծնողազուրկ երեխաների համար Բաթումի* «շրջանային կոմիտէտի քաղաքական կոմիսսիայից… ստացայ 60 ձեռք ճերմակեղէն ու ոտնաման»[11]։

Քահանան տեղեկացնում է, որ Ռիզէում յայտնաբերուել են Հայ Առաքելական Եկեղեցուն պատկանող իրեր՝ խաչեր, եկեղեցական հագուստներ եւն.։ Նա յայտնում է, որ Ռիզէում լայն գործունէութիւն է ծաւալել Բաքուի Մահմեդական Բարեգործական Ընկերութիւնը (ԲՄԲԸ) բժիշկ Սուլթանովի գլխաւորութեամբ[12]։ *Նմանատիպ աշխատանքներ է իրականացնում Վրացական Բարեգործական Ընկերութիւնը՝ աջար բնակչութեան շրջանում, նրանց յատկացնելով ոչ միայն նպաստ, այլեւ իրաւաբանական օգնութիւն։ Մեսրոպ աւագ քահանան ցաւով եւ ափսոսանքով նշում է, որ* «ամէնից շատ նահատակուած, ամէն բանից զրկուած ու կողոպտուած հայը չունի նոյն իսկ մի յատուկ շրջիկ հովիւ, ուսումնասիրող, քաջալերող, խորհրդատու»[13]։

Ինքնին հասկանալի է քահանայի մտահոգութիւնը՝ տրապիզոնաբնակ հայերին չուտափոյթ եւ որակեալ օգնութիւն ցուցաբերելու եւ ծնողազուրկ երեխաներին, մահմեդականների մօտ բռնի տարուած հայ կանանց ու երեխաներին յայտնաբերելու եւ փրկելու համար։ Խնդիրը, եթէ միայն Տրապիզոնով եւ նրա վիլայէթով սահմանափակուէր, ապա օգնութիւնը կը հասցուէր շատ ա-

բաց եւ ժամանակին։ Սակայն դժուարին դրութեան մէջ էր գտնուում ողջ Արեւմտեան Հայաստանը։ Հայ Առաքելական Եկեղեցու, հայ հասարակական-քաղաքական եւ ռուսական կառավարական եւ ոչ-կառավարական, ինչպէս նաեւ ամերիկեան եւ մասամբ բրիտանական կազմակերպութիւնների ուշադրութիւնը գլխաւորապէս կենտրոնացուած էր Ալաշկերտի, Վանի, Մուշի, Սասունի եւ Էրզրումի հայութեան փրկութեան եւ վերադարձի գործը կազմակերպելու վրայ։ Բացի այդ, Հայ Առաքելական Եկեղեցին ու հայ հասարակական-քաղաքական կազմակերպութիւնները զգալի դրամական միջոցներ էին յատկացնում հայ կամաւորական խմբերին, որոնք թուով ութն էին, ուր ընդգրկուած էին եօթ հազարից աւելի մարտիկներ։

Մահմեդական եւ վրաց բարեգործական կազմակերպութիւնների կողմից Տրապիզոնի նահանգում, մասնաւորապէս Ռիզէ քաղաքում ծաւալած գործունէութիւնը հասկանալի եւ բացատրելի է։ Վրաց բնակչութիւնը, բացառութեամբ Բաթումի որոշ շրջաններից, առաւել եւս ռուսահպատակ մահմեդականները չէին տուժել մարտական գործողութիւնների ընթացքում տեղի ունեցած թալանից, աւերածութիւններից։ Վրաց եւ մահմեդական բնակչութիւնը չունէին հայերի նման հարիւր հազարաւոր փախստականներ, ծնողազուրկ երեխաներ, որոնց գոյատեւման եւ վերաբնակեցման համար անհրաժեշտ էին մեծ նիւթական միջոցներ։ Ի տարբերութիւն հայերի, ԲՄԲԸն ունէր զգալի նիւթական միջոցներ եւ հնարաւորութիւններ, քանի որ Կովկասի մահմեդական բնակչութիւնը ենթակայ չէր զօրակոչի։ Դա նշանակում է, որ տղամարդիկ շարունակում էին վարել իրենց տնտեսութիւնը եւ նրանց ընտանիքները չէին գտնուում հայ բնակչութեան նման ընկերային-տնտեսական ծանր վիճակում։ Այնուամենայնիւ, Հայ Առաքելական Եկեղեցին եւ ԿՀԲԸը, ապա նաեւ Համառուսաստանեան Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունքը (ՀՔՄԿԲ) միջոցներ էին տրամադրում Տրապիզոնի եւ Նահանգի փրկուած բնակչութեան գոյատեւման համար։ Այսպէս, 1916 *Մարտի* 3*ին Գէորգ Ե. կաթողիկոսը հրահանգում է Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Մովսիսեանին* 5000 *ռուբլի* «փոխադրել Բաթում Տ(էր) Մեսրոպ աւագ քահանայ Մելեանին, որպէսզի Տրապիզոնի գրաւելուց յետոյ գործադրուի այնտեղի ու ծովամերձ շրջանների ազատուած հայ թշուառների կարիքների վրայ»[14]։

Բաթումից Մեսրոպ աւագ քահանան տեղեկացնում է, որ Ռիզէի շրջակայքում «մեր զօրքի առաջխաղացման ժամանակ նկատուել են նոր սպանուած հայերի դիակներ»[15]։

ԿՀԲԸ Բաթումի մասնաճիւղը կարողանում է ստանալ Պրիմորսկեան Ջոկատի (Կովկասեան Առաջին Բանակային Կորպուս) հրամանատար, զօրավար Վ. Պ. Լիախովի թոյլտուութիւնը՝ Ռիզէ մուտք գործելու, հայ որբեր յայտնաբերելու եւ Բաթում տեղափոխելու համար։ ԿՀԲԸն տրամադրում է 30000 *ռուբլի Բաթումում եւ Կոբուլեթիում տրապիզոնաբնակ հայերի համար ապաստարաններ հիմնելու համար*[16]։

1916 *Ապրիլի* 5*ին Պրիմորսկեան Ջոկատը եւ Սեւ Ծովեան Ռազմական Նաւատորմը գրաւում են Տրապիզոն քաղաք-նաւահանգիստը։* Le Temps *թերթի հաղորդման համաձայն, քաղաքում գտնուել են* «50 հայ որբ, 15 կին եւ մօտաւորապէս 1000 տղամարդ, որոնք թաքնուել էին հարեւան գիւղերում»[17]։ *Սա առաջին դէպքը չէր, երբ ռուս ծովայինները փրկում էին հայերին։ Դեռեւս* 1915

Սեպտեմբերի 24ին Գէորգ Ե. կաթողիկոսը դիմում է Սեւ Ծովեան Ռազմական Նաւատորմի հրամանատար, ծովակալ Ա. Ա. Էբերգարտին, խնդրելով աջակցել Տրապիզոնի Կովատա-Շանէ բնակավայրի հայերին, որոնք գտնւում են ծանր վիճակում։ Ծովակալի հրամանով ռուսական ռազմանաւերը յայտնւում են Վեհափառի նշած վայրում, սակայն ապարդիւն։ Նրանց չի յաջողւում տեղում յայտնաբերել բնակավայրից որեւէ մէկին[18]։

Կազմւում է Կովկասեան Ռազմական Շրջանի Տրապիզոնի Ամրացուած Գօտին (Trapezundskiy Ookrepliyenniy Rayon Kavkazskogo Ogrooka)։ Նրա պետ է նշանակւում զօրավար Ա. Վ. Շուարցը։ Սկսւում է պաշտպանական ամրութիւնների կառուցումը։ Տրապիզոնում ռուսական վարչակարգն ամրապնդելու նպատակով նշանակւում է ոստիկանապետ, իրեն ենթակայ վեց օգնականներ՝ պրիստաւներ[19], 12 թաղային հսկիչներ եւ 120 ոստիկաններ[20]։

Զինուորական իշխանութիւնների թոյլտուութեամբ Ռիզէում գտնուող յանձնախումբը տեղափոխւում է Տրապիզոն։ 1916 Ապրիլի 19ին զօրավար Լիախովը պաշտօնապէս արտօնում է Հայկական Կոմիտէին գործելու Տրապիզոնում։ Ապրիլի 26ին Տրապիզոնում հիմնւում է Հայկական Կոմիտէ, որը գլխաւորում է Մեսրոպ աւագ քահանան[21]։ Հայկական Կոմիտէն պէտք է զբաղուէր ոչ միայն ողջ մնացած հայերի փրկութեամբ, այլեւ սպանուած կամ աքսորուած հայերի եւ Հայ Առաքելական Եկեղեցու լքուած գոյքի հաշուառման ու տնօրինման խնդիրներով[22]։

Ապրիլի 21ին Կոմիտէի անդամները սկսում են հայերին պատկանող չինութիւնների եւ գոյքի հաշուառումը։ Բացի հայերից, Յանձնախմբում ընդգրկւում են տեղացի բնակիչներից Անաստաս Լէոնդիդին (ազգութեամբ յոյն) եւ Աղա Իսմայէլը (մահմեդական)։ Նրանք պարզում են, որ թուրքական իշխանութիւնները հայերին պատկանող շէնքերի մի մասը, ինչպէս օրինակ Սարգիս Տողրամաճեանի խանութը, վաճառել են տրապիզոնաբնակ մի թուրքի[23]։

ՀԲՄԿԲը Տրապիզոն է գործուղում բժիշկ Ե. Մինասեանին՝ բնակչութեան բուժօգնութիւնը կազմակերպելու նպատակով[24]։

Տրապիզոնի Հայկական Կոմիտէի որոնողական աշխատանքների արդիւնքում յայտնաբերւում են մահմեդականների տներում գտնուող 200 ծնողազուրկ երեխաներ[25]։ Նրանց մեծ մասը տեղափոխւում է Բաթում, մի մասն էլ ապաստանում է ազգականների մօտ։ Փոքրաթիւ որբեր տեղաւորւում են Տրապիզոնում ՀԲՄԿԲի հիմնած որբանոցում[26]։

Հայկական Կոմիտէն հաշուառում է Տրապիզոն քաղաքում հայերի ունեցած անշարժ գոյքը։ Նախնական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ հայերին պատկանող 426 տներից 131ն ամբողջութեամբ քանդուած են, իսկ 101ը՝ կիսաքանդ։ Հայերն ունեցել են 141 խանութ[27]։ Տների ու խանութների մի մասն ամբողջութեամբ թալանուած կամ աւերուած էր երիտթուրքական իշխանութիւնների եւ տեղական մահմեդական բնակչութեան կողմից։

Հայկական Կոմիտէի ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ քաղաքի հայերին պատկանող եւ բարուօք վիճակում գտնուող 200-250 տներ կարելի է վարձակալութեամբ տալ ամսական 15-20 ռուբլի վճարով։ Նմանապէս Կոմիտէն որոշում է վարձակալութեան յանձնել 150-200 խանութները՝ իւրաքանչիւրը ամսական 25-30 ռուբլով։ Նախատեսւում էր վարձակալուած տներից եւ խանութներից վեց ամսուայ համար ստանալ համապատասխանաբար 23600 եւ

28000 ռուբլի[28]։ Այսպէս, Կոմիտէի կողմից վարձակալութեան է տրւում բողոքական համայնքին պատկանող տունը, ուր գտնւում էր Վահան Ժամկոչեանի վարսաւիրանոցը[29]։ Նշուած գումարներն օգտագործուելու էին ողջ մնացած հայ բնակչութեանն օգնելու համար։

Ռուսական զօրքի առաջխաղացումը հնարաւորութիւն է տալիս Նահանգի դժուարամատչելի վայրերում ապաստանած հայ բնակչութեան բեկորներին գալ Տրապիզոն։ Քաղաք էին գալիս օրական 200-300 հայեր։ Քանի որ Տրապիզոնում պարէնի եւ առաջին անհրաժեշտութեան պարագաների խիստ կարիք կար[30], ուստի տրապիզոնցիներին տեղափոխում էին Ռուսաստան։ Սուխումի Տրապիզոնցիների Կենտրոնական Յանձնաժողովի կատարած վիճակագրութեան համաձայն՝ Կովկասում եւ Ղրիմում ապաստանել էին Տրապիզոն քաղաքի եւ վիլայէթի 20000 հայեր[31]։

Մարտի 26ին Տրապիզոնի Հայկական Կոմիտէի նախագահ Մեսրոպ աւագ քահանան մամուլի միջոցով դիմելով հայրենակիցներին, կոչ է անում կատարել դրամական փոխանցումներ եւ հագուստ ուղարկել ջարդերից փրկուած տրապիզոնցի հայերի համար[32]։

1916 Մայիսին Տրապիզոնի Հայկական Կոմիտէն հնարաւորութիւն է ունենում կատարել նոր վիճակագրութիւն եւ հայերի ունեցուածքի հաշուառում[33]։

Գիւղերի անունները	Հայերի թիւը պատերազմից առաջ		Ողջ մնացած հայերի թիւը				
	Տուն	Հայ	Տղամարդ	Կին	Տղ.	Աղջ.	Գումար
1. Տրապիզոն քաղաք	1200	8000	13	25	35	19	92
2. Սիւրմենէ	80	630	17	10	6	6	39
3. Սիֆթէր	33	265	2	-	1	-	3
4. Ապիոն	40	300	18	5	2	2	27
5. Սամերա	24	190	2	-	-	-	2
6. Ֆիրինըղուտ	25	200	1	-	-	-	1
7. Կալաֆկա	56	390	20	8	-	4	32
8. Քիան	30	178	1	-	-	-	1
9. Տրոնա	9	80	3	-	-	-	3
10. Շանա	38	280	30	9	1	1	41
11. Կիւշանա	43	365	3	-	-	-	3
12. Աֆիանըղ	18	110	-	-	-	2	2
13. Սամարուքա	21	170	19	6	2	2	29

14. Ճոչարա	35	265	2	2	-	-	4
15. Սկաֆիա	28	200	5	6	2	1	14
16. Կրոմեկա	40	235	4	2	2	2	10
17. Զեֆանոս	59	365	2	2	-	-	4
18. Անիֆա	23	210	1	1	6	-	8
19. Տելիպալթա	10	60	1	-	-	-	1
20. Թոփալլի	7	70	8	1	2	1	12
21. Վերանա	23	180	8	-	3	1	12
22. Կրոպի	30	210	8	1	4	4	17
23. Մունդա	3	10	1	1	4	-	6
24. Թոց	25	200	7	3	5	5	20
25. Մինալլի	7	35	1	-	1	-	2
26. Մանգիլէր	9	50	1	-	2	-	3
27. Միմերա	20	150	2	-	-	1	3
28. Նոխաժանա	13	120	6	1	2	-	9
29. Պարիան	22	180	7	2	2	3	14
30. Տիուրանոչ	5	35	1	-	-	-	1
31. Զիզաքսա	33	125	2	-	-	-	2
32. Լազանա	25	270	1	-	-	-	1
33. Ազրոյ	40	370	3	-	-	-	3
34. Օլասա	8	50	5	-	1	-	6
35. Մահմադ	8	55	-	6	-	1	7
36. Իլէ	20	190	-	1	-	-	1
37. Սիսերա	2	15	3	-	-	-	3
38. Ազրիտ	15	150	13	3	-	-	16
39. Արգալիա	7	35	-	-	-	3	3
40. Կիլաթ	7	50	1	-	-	-	1
41. Մալա	50	300	2	-	-	-	2

42. Կապարոն	25	250	-	-	-	-	-
43. Զազուրդիս	30	250	-	-	-	-	-
44. Կապան	20	200	-	-	-	-	-
45. Օիֆրիկա	18	150	-	-	-	-	-
46. Սաթարիս	10	130	-	-	-	-	-
47. Այլեւայլ տեղացիներ	-	-	14	9	14	9	46
Ընդհանուր	2295	16343	238	104	99	65	506

Ներկայացուած աղիւսակից երեւում է որ Տրապիզոն քաղաքում հայ բնակչութիւնն ունեցել է 1200 տուն. ողջ են մնացել 92 հոգի։ Նահանգի 46 հայկական գիւղերի բնակչութիւնից ողջ են մնացել 368 հոգի։ Նրանց են միացել այլ վայրերից փրկուած 46 հոգի[34]։ Հասկանալի է, որ այս վիճակագրութիւնը ամբողջական չէ եւ չի ներկայացնում քաղաքի եւ նահանգի բնակչութեան եւ անշարժ գոյքի ստոյգ թուաքանակը, որը եղել է մինչեւ պատերազմը եւ տեղահանութիւնը։ Այնուամենայնիւ, Հայկական Կոմիտէն որոշակի աշխատանքներ է կատարել հայ բնակչութեան թիւը, գոյքը - թէկուզ եւ մօտաւոր - ճշտելու համար։ Կոմիտէն շարունակում է հաշուառել եւ գոյքագրել հայապատկան չինութիւնները՝ տներն ու խանութները իր յետագայ գործունէութեան ընթացքում։ Այսպէս, 1916 Ապրիլի 21ի դրութեամբ հաշուառուել է 142 չէնք[35]։

Յունիսի 19ին Մեսրոպ աւագ քահանան Տրապիզոնի Ս. Աստուածածին եկեղեցում պատարագ է մատուցում, որի ընթացքում «մահից ազատուած Տրապիզոնցիները, մանաւանդ կանայք ու աղջիկները, շարունակ արտասուքներ էին գլորում. հոգեհանգստին կանանց հեստերիկան (ընդգծումը - Ռ.Ս.) բռնեց. քանիսին եկեղեցուց դուրս տարան»[36]։ Քահանան յայտնում է նաեւ ուրախալի նորութիւն՝ չորս ամուսնութիւնների մասին, որոնց արարողութիւններն ինքն է կատարել։ Նա գրում է, որ տեսարանը «սաստիկ սրտաշարժ էր ու յուզումնալից. հարսներից մէկը սեւ էր հագած ... հարազատները կորցրած լինելու պատճառով»[37]։

Հայկական Կոմիտէի կողմից նպաստներ են տրուել անապահով ընտանիքներին, կամ անհատ անձանց[38]։

Տրապիզոնի առողջապահական պայմանները խիստ անբաւարար էին։ Քաղաքի աղբիւրներն այն աստիճանի էին աղտոտուած, որ հնարաւոր չէր օգտուել այդ ջրերից։ Ջուրը բերւում էր այլ վայրերից եւ կուժն արժէր 20 կոպէկ։ Ինչպէս հաղորդում է Մեսրոպ աւագ քահանան. «նաւթ, շաքար, աղ գրեթէ սպառուած են համարւում, կանաչեղէն անգամ չի ճարւում. դատարկ ամայի տներ - որքան կամիք»[39]։ Ջնայած առկայ ծանր ընկերային-տնտեսական պայմաններին, Ռուսաստանում ապաստանած տրապիզոնաբնակ հայերը ձգտում էին վերադառնալ եւ վերաշինել քանդուած օջախները, սակայն Կովկասի փոխարքայ, մեծ իշխան Ն. Ն. Ռոմանովն արգելել էր հայերի մուտքը Տրապիզոն[40]։ Եւ դա այն դէպքում, երբ Տրապիզոնում եւ շրջակայ վայրերում

կառուցում էին պաշտպանական տեղամասեր, իսկ հայերի վերադարձը կը նպաստէր, որ ռուսները ունենային աշխատանքային ոյժ, իսկ հայ գիւղացին նրանց ապահովէր անհրաժեշտ սննդամթերքով։

Հայկական Կոմիտէն քայլեր է ձեռնարկում ստանալու «Ռեժի» Ընկերութեան պահեստներում պահուող եւ բռնագաղթուած հայ վաճառականներին պատկանող ծխախոտը։ Կոմիտէն ցանկանում էր ծխախոտը վաճառել եւ գոյացած գումարն օգտագործել ողջ մնացած հայերին օգնելու, որբերին ապաստան տալու եւ այլ կենսական խնդիրների համար։ «Ռեժի» Ընկերութիւնը տեղեկացնում է, որ իր մթերանոցում 151 *հակ՝* 10021 *կգ. ծխախոտ կայ, որոնք պատկանում են հայերին։ Ընկերութիւնը, սակայն, չի կարող նշուած ծխախոտը յատկացնել, քանի որ* «Թիւրք կառավարութիւնը մեկնող հայերու ստացուածքին եւ անոնց բուն տէրերուն վերադարձին վերաբերեալ հրատարակուած օրէնքին համաձայն, հայ մշակողներու եւ վաճառականներու վերոգրեալ ապրանքներն թիւրք կառավարութիւնն տէր դարձած ու մեզ յանձնած է ի պահ»[41]։ *Նշուած պատասխանից հետեւում է, որ «Ռեժի» Ընկերութիւնը «ամենայն սրբութեամբ» կատարում է Տրապիզոնը լքած օսմանեան իշխանութիւնների հրամանը, ելնելով սեփական շահերից։*

Կոմիտէի աշխատանքներն օրէցօր աւելանում էին։ Բանն այն է, որ քաղաքում թողնուած հայ բնակչութեան գոյքը պահանջում էր ամէնօրեայ հսկողութիւն եւ հաշուառում։ Այդ իսկ պատճառով Կոմիտէում աշխատողների թիւն աւելացում է։ 1916 *Յուլիսի* 1*ի դրութեամբ, բացի մշտական հինգ անդամներից, կային եւս* 17 *հոգի, որոնց թւում՝ հաշուապահ, երկու գրագիր, պահեստների երկու կառավարիչներ, տասներկու պահակներ եւ առանձին յանձնարարութիւններ կատարող։ Կոմիտէի վեց ամսուայ գործունէութեան համար անհրաժեշտ էր* 17070 *ռուբլի*[42]։

1916 *Օգոստոսին Տրապիզոնի Հայկական Կոմիտէի նախագահի պաշտօնում, հիւանդացած Մեսրոպ աւագ քահանայի փոխարինում է մասնագիտութեամբ իրաւաբան Արշակ Առաքելեանը*[43]։ *Վերջինիս նշանակումը պայմանաւորուած էր նրանով, որ անհրաժեշտ էր կարգաւորել գոյքի եւ կալուածների հետ կապուած խնդիրները, ինչպէս նաեւ պէտք էր օգնել վերադարձողներին իրաւաբանական խորհրդատուութեամբ, որը կ՚օգնէր նրանց լուծել իրենց գոյքի հետ առաջացած խնդիրները։*

Տրապիզոնի ամրացուած շրջանապարէտի հրամանով բանակի կարիքների համար բռնագրաււում են քաղաքի հայերին պատկանող իրեր։ Հայկական Կոմիտէն, ելնելով ռազմական անհրաժեշտութիւնից, տրամադրում է պահանջուած իրերը, սակայն կազմելով դրանց ցուցակը եւ արժէքը[44]։

Տրապիզոնի եւ Նահանգի ողջ մնացած բնակչութիւնը, գտնուելով բարոյահոգեբանական ծանր վիճակում, այնուամենայնիւ, իր մէջ ոյժ էր գտնում վրէժխնդիր լինել ջարդարարներից եւ փրկել թուրքերի տներում բռնի պահուող հայ կանանց, աղջիկներին եւ երեխաներին։ Կազմւում է 40 *հոգուց բաղկացած խումբ, որը յարձակումներ էր գործում հակառակորդի վրայ։* 12*ից* 15 *տարեկան ութ պատանիներ եւս կազմել էին իրենց մարտախումբը, որը եւս շարունակաբար յարձակւում էր թշնամու վրայ*[45]։

Հայերը նոյնիսկ կարողանում են աջակցել ռուսական հրամանատարութեանը թուրքական զօրքերի դէմ մղուող մարտական գործողութիւններում։

Նրանք, լինելով տեղացիներ, լաւ գիտէին նահանգը եւ յաճախ կատարում էին հետախուզական բնոյթի առաջադրանքներ։ Սամսոնի կոտորածներից փրկուած վաթսուն հայեր Տէր Խորէն քահանայի եւ Աբրահամ Խաչատրեանի գլխաւորութեամբ ապաստանելով լեռներում մարտեր էին մղում թուրքական կանոնաւոր ստորաբաժանումների դէմ։ Տեղեկանալով Տրապիզոնի գրաւման մասին, նրանք կարողանում են կապ հաստատել ռուսական հրամանատարութեան հետ։ Ռուսները նրանց տալիս են 120 միաւոր զէնք եւ 92 նռնակ։ Թուրքական հրամանատարութիւնը տեղեկանալով հայերի ստացած զինամթերքի մասին, նրանց դէմ է ուղարկում 700 զինուորից կազմուած ջոկատ։ Հակառակորդը հայերին առաջարկում է յանձնուել, խոստանալով խնայել նրանց, սակայն մերժում ստանալուց յետոյ, անցնում է յարձակման։ Հայերն իրենց ուժերը բաժանում են երեք մասի եւ կազմակերպում են պաշտպանութիւն։ Այդ պաշտպանական տեղամասի հրամանատարն էր Զիլ Յովհաննէսը, կենտրոնականինը՝ Միքայէլ Զէյթունեանը, իսկ ձախինը՝ Խաչիկ Կարակէօզեանը։ Հայերի կազմակերպուած դիմադրութիւնը հարկադրում է թուրքերին նահանջել[46]։

Պրիմորսկեան Ջոկատի հրամանատարութիւնը նախաձեռնում է հակառակորդի կուտակած պարէնի պաշարների ոչնչացումը։ Տեղեկանալով, որ Թերմէ գիւղի պահեստներում եւ համանուն գետի գետաբերանում գտնուող առագաստանաւերում կայ զգալի քանակութեամբ ցորեն, ռուսները որոշում են դրանք ոչնչացնել։ Մի խումբ տրապիզոնաբնակ հայ հետախոյզներ ափ են հանւում Թերմէի գետաբերանում։ Նրանք պարզում են, որ գետում կան 50ից աւելի առագաստանաւեր բեռնուած ցորենով։ Բացի այդ, Թերմէ գիւղում կային ցորենի խոշոր պաշարներ։ Նշուած ցորենը նախապատրաստւում էր ուղարկել գործող թուրքական բանակ։ 1916 Հոկտեմբերի 20ին ռուսական երեք ականակիր եւ մէկ բեռնանաւ մօտենալով Թերմէի գետաբերանին ափ են իջեցնում 40 աշխարհազօրայինների եւ տեղացի 150 հայ կամաւորների։ Նրանց են միանում նաեւ հայ հետախոյզները։ Թերմէ գիւղը գրոհում են նաեւ հայկական ուժերը։ Նրանք առաջին հերթին կտրում են հեռագրաթելերը եւ հեռախօսաթելերը։ Գրոհի ազդանաշանը լինում է նրանց կողմից պարզուած դրօշակներ։ Դիւերսիոն[47]-հետախուզական ստորաբաժանումը կարողանում է կոտրել հակառակորդի պաշտպանութիւնը եւ ոչնչացնել գիւղի հացահատիկի պահեստները եւ նոյնիսկ ցորենով բեռնուած 20 առագաստանաւ, բերել Տրապիզոն[48]։

Տրապիզոնի Կոմիտէն նաեւ զանազան անհրաժեշտ իրեր էր տրամադրում Տրապիզոնի ամրացուած շրջանի զօրամասերին։ Այսպէս, 1916 Յուլիսի 1-1917 Յունուարի 1 ժամանակահատուածում բանակի կարիքների համար տրամադրւում են 92000 ռուբլու զանազան առարկաներ եւ կենցաղային իրեր[49]։

Վան-Տոսպը յայտնում է, որ Մեսրոպ աւագ քահանան «նշանակուել է հայոց հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչ Տրապիզոնում եւ այս օրերս կը մեկնի իր պաշտօնատեղին...»[50]։ Նման նշանակումը պայմանաւորուած էր Տրապիզոնում ստեղծուած լարուած դրութեամբ, երբ 1916 Նոյեմբերին խաթարւում է Հայկական Կոմիտէի նորմալ գործունէութիւնը։ Տրապիզոնի ոստիկանական բաժանմունքին է դիմում ոմն Ալեքսանդր Կալամկարովը (Կալամկարեան), եւ յայտնում Հայկական Կոմիտէի անդամների կողմից կատարուած չարաշահումների մասին։ Նոյեմբերի 16ին ոստիկանական բաժանմունքի

պետ, գնդապետ Դինդան պահանջում է Տրապիզոնի ոստիկանապետից հետաքննել եւ զեկուցել[51]։

Կալամկարովն իր յայտարարութիւնում նշում է, որ Հայկական Կոմիտէի անդամներն օգտուելով զօրավար Լիախովի կողմից տրուած լայն լիազօրութիւններից, չեն դիմանում գայթակղութեանը եւ «հայ որբեր որոնելու փոխարէն, որը գլխաւոր պատճառն էր կոմիտէի հիմնման համար, իրենց ողջ ուշադրութիւնը կենտրոնացրեցին ... ունեցուածքի իւրացման վրայ»[52]։

Հիմք ընդունելով Կալամկարովի յայտարարութիւնը, Տրապիզոնի ոստիկանապետը առաջին տեղամասի վերակացուին հրամայում է կնքել Հայկական Կոմիտէի զբաղեցրած շէնքը եւ պահեստը, հսկողութիւն սահմանելով վերջինիս վրայ[53]։ *Նշուած կարգադրութեան հետեւանքով դադարեցւում է Կոմիտէի գործունէութիւնը, որը բացասաբար է անդրադառնում որբերի որոնման եւ նրանց Ռուսաստան տեղափոխման գործին։ Փաստօրէն, ռուսական իշխանութիւնները հաւատ ընծայելով Կալամկարովի անհիմն եւ անփաստացի ամբաստանութիւններին, հրամայում են դադարեցնել Կոմիտէի աշխատանքները։*

Տարպիզոնի ոստիկանութեան կողմից կատարուած հետաքննութիւնը որեւէ արդիւնք չի տալիս։ Կոմիտէի գործունէութիւնը վերսկսելու նպատակով, ԿՀԲԸի կողմից Տրապիզոն է գործուղւում, մասնագիտութեամբ իրաւաբան Արշակ Առաքելեանը։ 1916 *Հոկտեմբերի* 16*ին նա պաշտօնապէս դիմում է Տրապիզոնի ամրացուած շրջանի պետին, խնդրելով թոյլատրել վերաբացելու նոր «Տրապիզոնի Հայկական Կոմիտէ»։ Առաքելեանն ուղղուած խնդրագրում ներկայացնում է Կալամկարովի ամբաստանութիւնների անհիմն լինելը եւ խնդրում հաստատել նոր Կոմիտէի կազմը եւ միաժամանակ թոյլատրել զբաղեցնել Կոմիտէի շէնքը, տնօրինել իրենց պատկանող դրամական միջոցները, պահեստը եւ վերադարձնել բռնագրաւուած ընթացիկ գրագրութիւնը։ Ինչպէս նշում է Առաքելեանը, Կոմիտէն բաղկացած է լինելու հինգ անդամներից եւ չորս թեկնածուներից, այն գլխաւորելու է ինքը՝ Առաքելեանը*[54]։

Հոկտեմբերի 16*ին Առաքելեանը եւ Ա. տեղամասի վերակացուն կատարում են Ս. Աստուածածին եկեղեցու գոյքի ցուցակագրում։ Գոյքագրւում են* 42 *առարկայ, որոնց ընդհանուր արժէքը կազմում է* 305 *ռուբլի* 50 *կոպէկ*[55]։

1917 *Յունուարի* 20*ին Հայկական Կոմիտէն դիմում է Կովկասի փոխարքայ, Ռոմանովին, յայտնելով, որ Տրապիզոնի աքսորուած կամ սպանուած հայ վաճառականների պահեստներում կայ մեծ քանակութեամբ մթերուած ծխախոտ։ Կոմիտէն խնդրում է փոխարքային հրամայել «Ռեժի» Ընկերութեանը, որպէսզի վերջինս հայերին պատկանող ծխախոտը յանձնի Կոմիտէին*[56]։

Հայրենի գիւղեր վերադարձած հայերին սպառնում էր սովի վտանգը։ Յատկապէս ծանր վիճակում են գտնւում Տրապիզոնի մերձակայ գիւղերը։ Ռուս զօրքերն իրենց պարէնի պաշարները ամբողջացնելու նպատակով, առաջին հերթին հաւաքել էին մերձակայ գիւղերի ցորենը։ Այսպէս, Պարիան գիւղի երկու հազար փութ ցորենից ոչինչ չէր մնացել։ Ինչպէս նշում է Հայկական Կոմիտէին ներկայացուած գրութիւնում՝ «Այսօր երկրագործական աշխատանքի ժամանակն է, [գիւղացիները] ոչինչ չունին, որ նոյնիսկ իրենց արտերը մշակելով զբաղին եւ յառաջիկային հացի կարօտութիւն չքաշեն»[57]։

1917*ի Փետրուարեան Յեղափոխութիւնը որոշ դրական տեղաշարժեր է առաջացնում Տրապիզոնի հայութեան համար։ Վերացւում են փոխարքայու-*

թեան կողմից քաղաք եւ ազատագրուած նահանգ հայերի վերադարձի հետ կապուած արգելքները։ Հայ բնակչութիւնը հնարաւորութիւն է ունենում աստիճանաբար վերականգնել քանդուած օջախները եւ ձեռնամուխ լինել գիւղատնտեսական աշխատանքների։ Գոյքի վերադարձի հետ առաջանում են մի շարք խնդիրներ։ Ինչպէս հաղորդում են 1917 Մարտի 9ին Գէորգ Ե. կաթողիկոսին ուղղուած նամակում Սուխումում ապաստանած եւ հայրենակիցների կողմից լիազօրուած Գրիգոր Յովսէփեանը եւ Արամ Յակոբեանը՝ երիտթուրքական իշխանութիւնները հայերի գոյքին տիրացած մահմեդականներին յանձնել են գոյքի տնօրինման իրաւունք, որը վաւերացուած էր համապատասխան փաստաթղթերով։ Յովսէփեանը եւ Յակոբեանը առաջարկում են կաթողիկոսին հնարաւորութիւն ստեղծել, որպէսզի իշխանութիւնները թոյլատրեն որ իւրաքանչիւր ընտանիքից մէկական հոգի վերադառնայ Տրապիզոն եւ տնօրինի գոյքը[58]։ Նման անհանգստութիւնը բացատրւում էր նրանով, որ Տրապիզոնի ռուսական իշխանութիւնները տեղեակ չէին երիտթուրքական իշխանութիւնների նման կեղծարարութեանը եւ գոյքի հետ կապուած վէճը կարող էին լուծել յօգուտ մահմեդականների։ Միաժամանակ, Տրապիզոնում պաշտօնավարում էին ռուսական ինքնակալութեանը հաւատարիմ աստիճանաւորներ, որոնք շարունակում էին կայսերական քաղաքականութիւնը եւ զանազան խոչընդոտներ էին յարուցում հայրենիք վերադարձող հայերի նկատմամբ։ Բացի այդ, փորձում էին արհեստականօրէն նուազեցնել հայերի թուաքանակը նահանգում եւ քաղաքում։ Այսպէս, *Armianskii Vestnik*ի (Հայկական լրատու) թղթակիցը յայտնում է, որ Տրապիզոնում հրատարակուող *Trapezundskiy Voyennii Listok* (Տրապիզոնի զինուորական թերթիկ) թերթը, կիրակնօրեայ համարներում տպագրում է պատմական ընոյթի յօդուածներ՝ «Մի քանի խօսք Փոքր Ասիայի քրիստոնէական հողերի մասին», «Տրապիզոնի անցեալը» եւն.։ *Armianskii Vestnik*ի թղթակիցը նշում է, որ լոյս է տեսել նշուած թերթի քսանութ համար, սակայն այնտեղ ոչ մի խօսք չի ասւում Հայաստանի եւ հայերի մասին։ Միայն *Trapezundskiy Voyenniy Listok*ի N 24ում տրւում է վիճակագրական փոքրիկ տեղեկութիւն, համաձայն որի Տրապիզոնի շրջանում բնակւում են ընդամէնը 165 հայ։ Ըստ *Armianskiy Vestnik*ի թղթակցի՝ «Թերթը (*Trapezundskiy Voyenniy Listok*ը - Ռ.Ս.) այնպիսի տպաւորութիւն է թողնում, կարծես թէ Փոքր Ասիայում Հայաստան ընդհանրապէս գոյութիւն չունի»[59]։

Այնուամենայնիւ, իշխանութիւնների վերաբերմունքը սկսում է աստիճանաբար փոխուել։ 1917ի դրութեամբ Տրապիզոնում բնակւում էր 1500 հայ[60]։ Շարունակւում է Նահանգի հայ բնակչութեան հաշուառումը։

Կեանքի միջոցների համեմատական բարելաւումը հնարաւորութիւն է ստեղծում վերանորոգել Տրապիզոնի Ս. Աստուածածին հայկական եկեղեցին եւ կից տունը, որի համար պահանջւում է 4200 ռուբլի։ Նաեւ հարց է բարձրացւում նոր չինութիւն վարձակալելու, որը հնարաւորութիւն կը տայ այնտեղ տեղափոխել ՀՔՄԿԲի որբանոցում գտնուող որբերին[61]։

Հայ որբերին իրենց օժանդակութիւնն են ցուցաբերում ոչ միայն Տրապիզոնի Հայկական Կոմիտէն, այլեւ անհատ անձինք եւ ռուսական բանակի Տրապիզոնում ծառայող հայ զինուորները։ Վերջիններս որբերի համար հանգանակել էին 88 ռուբլի[62]։ ՀՔՄԿԲի Տրապիզոնի մասնաճիւղից ամսեկան ստացւում էր 2800 ռուբլի գաղթականներին նպաստ տալու համար[63], բժիշկ Տրոֆիմովը

որբերի համար տրամադրում է 25 ռուբլի[64]։ Գաղթականների կարիքները բաւարարելու նպատակով վաճառուել է նուիրաբերուած 50 հատ ոսկեդրամ, որոնց ընդհանուր արժէքը կազմել է 1350 ռուբլի[65]։

1917 Մարտի 10ին ԿՀԲ Ընկերութեան ուղարկուած գանագան ապրանքների վաճառքից ստացուել է 1784 ռուբլի 42 կոպէկ գումար[66], որը եւս տրամադրուել է հայ գաղթականների եւ որբերի կարիքներին։

Տրապիզոնի Հայկական Կոմիտէն իր գործունէութիւնն ապահովելու նպատակով վարձակալութեան է տալիս հայերին պատկանող տները։ Այդ նպատակով կնքւում են համապատասխան պայմանագրեր, որտեղ նշւում է տանտիրոջ անուն-ազգանունը, ամսեկան գումարը[67]։ Միհրդատ Սրապիոնեանի տունը 1917 Սեպտեմբերին վարձակալութեան տալով ստացուել է 35 ռուբլի[68]։ Խանութների վարձակալութիւնը աւելի թանկ արժէր՝ ամիսը 250 ռուբլի[69]։ Հաւաքուած գումարների մի մասը փոխանցւում էր դրամատուն եւ Կոմիտէն օգտւում էր նշուած գումարի տոկոսներից[70]։

Միաժամանակ ժառանգորդներին են յանձնուել տներում եղած ապրանքները։ Այսպէս, 1916 Յուլիսի 20ին կազմուած արձանագրութիւնից պարզւում է, որ Վան քաղաքի բնակիչ Յակոբ Տէր Յակոբեանին են տրուել նրա դստեր Շուշանիկ Քիլերեանին պատկանող իրեր, ընդհանուր՝ 171 ռուբլի արժէքով[71]։

Հայկական Կոմիտէն 1917 Յունուարի 7ից մինչեւ Փետրուարի 3ը ռուսական դրամատուն իր հաշուեհամարին է տեղափոխել 32000 ռուբլի, որոնք հաւաքուել են տների վարձակալման, գոյքը վարձով տալու կամ վաճառելու միջոցով[72]։ Անհասկանալի է, թէ ինչու դրամական զգալի պահանջներ ունեցող Կոմիտէն նման զգալի քանակութեամբ գումար է փոխանցել։

1917 Մարտի 16ին Վահան Մալէգեանը Կահիրէից ուղարկուած նամակում Տրապիզոնի հայ եկեղեցու թաղական խորհրդին յայտնում է, որ իր կողմից դիմումներ են արուել Գէորգ Ե. կաթողիկոսին, Մեսրոպ աւագ քահանային, Մշակ թերթին, խնդրելով տեղեկութիւն յայտնել իր քրոջ՝ Մարի Արապեանի մասին։ 1915ի ամռանը նա եւ իր ամուսինը՝ Կայծակ աղան տարագրուել են Տրապիզոնից Սիրիա։ Մեծ դժուարութիւններով յաջողուել է Մ. Արապեանին տեղափոխել Իզմիր՝ ազգականների մօտ։ Բռնագաղթի ընթացքում մահացել է ծծկեր երեխան։ Երեք աղջիկները՝ Նինան, Սիրանոյշն ու Հերանոյշը գտնւում են Զարշամպայում[73]։

Տրապիզոնի եւ Նահանգի քայքայուած տնտեսութեան հետեւանքով զգացւում էր առաջին անհրաժեշտութեան պարագաների սուր կարիք։ 1917 Ապրիլի 10ից Հայկական Կոմիտէի անդամների համար սահմանւում է ամսեկան հետեւեալ աշխատավարձը՝ նախագահ Արշակ Առաքելեանին՝ 300 ռուբլի, անդամներ՝ Ներսէս Դաւթեանին՝ 130 ռուբլի, Խաչիկ Այտընեանին՝ 125, իսկ Խոսրով Սարգսեանին՝ 60 ռուբլի։ Փաստօրէն Կոմիտէի անդամներին մէկ ամսուայ համար տրւում է 615 ռուբլի գումար[74]։ Հաշուի առնելով ծանր վիճակը, նշուած գումարը խիստ անբաւարար էր նրանց բնականոն գործունէութեան համար, քանի որ գներն օրէցօր աճում էին եւ ռուբլին խիստ արժէզրկուել էր։

1917 Օգոստոսին կայացած Տրապիզոնի քաղաքային մարմնի ընտրութիւններում ընտրւում են եօթ հայեր[75]։

Հայկական Կենտրոնական Կոմիտէի լիազօր եւ Տրապիզոնի Հայկական Կոմիտէի նախագահ Արշակ Առաքելեանը յայտնում է, որ Հոկտեմբերի 27ին

Կարինից քաղաք են փոխադրուել բռնագաղթից փրկուած 54 *հայ կին եւ երեխայ*, «որոնք Տրապիզոնի շրջակայքի գիւղերի բնակիչներից են. այդ գաղթականներին Կարինից փոխադրել է [Տրապիզոնի Հայկական] Կոմիտէի նախկին անդամ Պ. Օտապաշեանը»[76]։

Միաժամանակ յայտնում է Տրապիզոնի ռուսական իշխանութիւններից ստանալ հայերի լքեալ գոյքը՝ այգիները, հողը, դրամը եւն. տնօրինելու իրաւունքը։

Սեպտեմբերի 27*ին*, 18 *հայեր, երկարատեւ դեգերումներից յետոյ կարողանում են մօտենալ ռուսական առաջապահ դիրքերին։ Ռուսները սխալմամբ նրանց համարում են լրտեսներ։ Տրապիզոնի ամրացրած շրջանի պետ, գնդապետ Սմիռնովը նրանց հարցաքննելուց յետոյ պարզում է իրականութիւնը եւ ուղարկում Թիֆլիս։ Քանի որ հայերը թուրքահպատակ էին, նրանց համարում են ռազմագերի։ Իսկ դա նշանակում է, որ նրանց ուղարկելու են Սիբիր։ Հայերին այդ վտանգից ազատելու յատուկ դիմում է արւում Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէի անդամ Միքայէլ Պապաջանովին (Պապաջանեան)*[77]։

1917 *Հոկտեմբերի* 15*ին Մեսրոպ աւագ քահանան յայտնում է Հայկական Կոմիտէին, որ Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէն Հոկտեմբերի* 10*ին հրամայել է «Ռեժի» Ընկերութեանը հայերին պատկանող ծխախոտը յանձնել իրեն, որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ*[78]։

1917 *Նոյեմբերին Կովկասեան Ռազմաճակատի Ռազմածովային Ուժերի Կոմիսարի Օգնական (տեղակալ) Պարոյր Լեւոնեանը (աշուղ Ջիւանու որդին) դիմում է Սեւ Ծովի ռուսական նաւահանգիստների պետ Ֆեդորովիչին, պահանջելով չտալ նաւեր տրամադրել թուրքական առափնեայ շրջաններում թաքնուող հայ փախստականներին։ Լեւոնեանը յայտնում է, որ նշուած խնդրի լուծման համար կ՝աջակցի Կովկասեան ռազմաճակատի Պրիմորսկեան Շրջանի հետախուզութեան պետը*[79]։

1917 *Նոյեմբերի* 8*ին Մեսրոպ աւագ քահանան դիմում է Պապաջանովին, խնդրելով միջամտել, որպէսզի զինուորականները վերադարձնեն իրենց կողմից օգտագործուող Տրապիզոնի հայկական դպրոցի շէնքը*[80]։

Սակայն Ռուս-թուրքական (Հայկական) ռազմաճակատի քայքայումով ռուսական զօրամասերը սկսում են հեռանալ ռազմաճակատից։ Տրապիզոնում տեղակայուած զանազան հաստատութիւններ, որոնք իրենց գործունէութեան համար գոյք էին վերցրել Տրապիզոնի Հայկական Կոմիտէից, սկսում են վերադարձնել ստացուածը[81]։

1918 *Յունուարի* 19*ին Մեսրոպ աւագ քահանան պահանջում է Հայկական Կոմիտէից ներկայացնել հաշուետուութիւն վաճառուած ծխախոտից ստացուած գումարների մասին*[82]։ *Իսկ Յունուարի* 13*ի նամակում քահանան յանդիմանում է Կոմիտէին, որ* «չի հոգացել փրկելու ազգային մտաւոր հարստութիւնը–գրադարանը ու այս պատճառով գրադարանի գրքերը զոհ են գնացել բաւական թուով դպրոցական շէնքում բնակած զինուորների կողմից»[83]։

Տրապիզոնը հետաքրքրում է նաեւ ամերիկացիներին։ Նրանք նախապատրաստւում են այստեղ զգալի գումարներ ներդնել, ինչպէս օրինակ նաւահանգստի ընդլայնման համար։ Միաժամանակ աշխուժանում է յոյն բնակչութիւնը, որը փորձում է տեղում ինքնավարութիւն ձեռք բերել[84]։

Ցաւօք, 1918 *Փետրուարին սկսուած թուրքական յարձակումը հնարաւորութիւն չտուեց իրականացնել նախատեսուած ծրագրերը։ Անհանգստացած թուրքերի լայնածաւալ յարձակումից, Փետրուարի* 13*ին*, N 5 *գրութիւնում Մեսրոպ քահանան տագնապով յայտնում է Կոմիտէի անդամներին՝* «Տրապիզոնը կանգնած է մեծ վտանգի առաջ»։ *Նա խնդրում է չտապ Բաթում ուղարկել արժէքաւոր*[85] *իրերը։ Փրկուած եւ հարազատ օջախները վերադարձած տրապիզոնցի հայերը ստիպուած էին կրկին ապաստանել Ռուսաստան*[86]։

Հասկանալի է, որ ներկայ հրապարակմամբ չենք կարող ամբողջութեամբ լուսաբանել Տրապիզոն քաղաքի եւ նահանգի հայութեան փրկութեան հետ կապուած բոլոր հարցերը. մեր յետագայ ուսումնասիրութիւններում կը փորձենք լրացնել այդ բացը նորայայտ վաւերագրերով, փաստերով եւ տեղեկութիւններով։

Յօդուածում ներկայացուող փաստաթղթերը, բացառութեամբ N 1*ից (որը թարգմանութիւն է Տրապիզոնում հրատարակուող թուրքական պաշտօնաթերթից) որոնք պահպանւում են Հայաստանի Ազգային Արխիւում, տպագրւում են առաջին անգամ, ուղղագրական եւ կէտադրական որոշ շտկումներով ու ոճի պահպանմամբ։ Փաստաթղթերի վերնագրումը կատարուել է մեր կողմից։*

Ա.

Թուրքական Կառավարութեան Պաշտօնական Յայտարարութիւնը Տրապիզոնի Հայերի Բռնագաղթի Մասին, Եւ «Միութիւն Եւ Առաջադիմութիւն» Երիտթուրքական Կուսակցութեան Տրապիզոնի *Մեշեվերէք* Պաշտօնաթերթի Յօդուածը «Ռուսական Վայրագութիւններ»ի Առնչութեամբ 13 Յունիսի 1915 թ., Տրապիզոն

1.

Թուրք Կառավարութեան Պաշտօնական Յայտարարութիւնը Տրապիզոնի Հայերին

«Բաւական տարիներէ ի վեր, Օսմանեան բնակչութեան մասը կազմող մեր հայ հայրենակիցները, արտաքին թելադրութիւններու հետեւելով, վնասակար եւ խաղաղութիւնը վրդովող գաղափարներ կը սնուցանեն եւ այս կերպով թէ իրենց հանգստութիւնը եւ թէ օսմանեան հայրենիքին իրենց միւս հայրենակիցներուն գոյութիւնն ու հանգստութիւնը կը խանգարեն եւ արիւնահեղութեանց պատճառ ըլլալ կը համարձակին: Նոյնիսկ հայ ժողովուրդին գոյութեանը եւ այժմ մեր կառավարութեանը հետ պատերազմող թշնամուն աջակցելու կը յանդգնին: Ուստի թէ երկրին պաշտպանութիւնն եւ խաղաղութիւնը պահպանելու համար մեր կառավարութիւնն արտակարգ միջոցներ եւ զոհողութիւններ ստանձնելով, մինչեւ պատերազմին վախճանը բնակելու համար ներքին գաւառներու մէջ կառավարութեան նշանակած վայրերը փոխադրել որոշած է եւ բոլոր օսմանցիներուն վճռականապէս յետագայ յայտարարութիւնը կ'ընէ, որուն պարտաւոր են կէտառկէտ հնազանդիլ բոլոր օսմանցիները:

1. Ներկայ յայտարարութեանս թուականէն հինգ օր վերջը առհասարակ բոլոր հայերը, ի բացառեալ հիւանդները, թաղերու եւ գիւղերու բաժանումներով պարտաւոր են մեկնիլ ժանդարմներու պաշտպանութեան տակ:

2. Մեկնելու ժամանակ իրենց շարժուն գոյքերէն միասին առնել թոյլատրուած են, բայց աւելորդ գոյքեր, անշարժ կալուածներ ծախել կամ ուրիշներու յանձնելն արգիլուած է: Որովհետեւ տեղափոխութիւնը ժամանակաւոր ըլլալուն պատճառաւ, այն բոլոր գոյքերը, որ պիտի թողուին՝ պիտի կապուին եւ հակեր շինուած հաստատուն շէնքերու մէջ պիտի ամփոփուին եւ անշարժ կալուածներով միասին պիտի պահպանուին ու երբ վերադառնան՝ դարձեալ, նոյնութեամբ իրենց պիտի վերադարձուին: Ամէն անոնք, որ հակառակ այս հրամանին, գնեն, ծախեն եւ պահեն՝ զինուորական ատեանի առաջ պիտի ղրկուին: Միայն այն ամէն իրեղէնները, որ բանակին պիտոյքը գոհացնելու բնոյթ ունին՝ կարելի է յօժար կամքով ծախել կառավարութեան:

3. Ճամբորդութեան միջոցին հանգստութեան համար պանդոկներ եւ մեծ շէնքեր պատրաստուած են եւ ոեւէ յարձակումի ենթակայ չ'ըլլալու եւ ողջ-առողջ իրենց առժամանակեայ բնակավայրը հասնելու համար ամէն կերպ կարգադրութիւններ կատարուած են:

4. Հայ ժողովուրդէն մէկին կամ մէկ քանիներուն վրայ յարձակում ընողներուն դէմ պահակներուն կողմէ զէնք պիտի գործածուի եւ ողջ ձերբակալելով զինուորական ատեանին առջեւ պիտի դատուի եւ գլխատուի: Հայերուն երեւակայական գաղափարներով առաջնորդելուն հետեւանքն եղող այս կարգադրութիւնը ուրիշ ոեւէ ժողովուրդի հետ կապ կամ առնչութիւն չունենալով՝ բնակչութեան միւս տարրերը ոեւէ կերպով չպիտի միջամտեն այս գործին:

5. Հայերը պարտ են հնազանդիլ կառավարութեան այս հրամանին եւ եթէ ոեւէ հայ ոստիկան զինուորներուն վրայ զէնք գործածէ՝ անմիջապէս ժանդարմները զէնքի պիտի դիմեն եւ զէնք գործածողները միայն մեռեալ ձեռք պիտի ձգեն: Դարձեալ, կառավարութեան հրամանին չհնազանդող, տեղափոխութենէն խուսափող եւ այս ու այն կողմն պահուըտողները, պահողները, կերակրողները եւ անոնց պահուիլն ապահովողները կախաղան բարձրացնելու համար զինուորական ատեանին առջեւ պիտի ղրկուին:

6. Հայերը զէնք կամ ռումբ կրելու արտօնուած չըլլալով՝ իրենց բնակարաններու մէջ կամ դուրսը պահած ամէն տեսակ զէնք, ատրճանակ, ռումբ եւ երկսայրի սուրեր պէտք է կառավարութեան յանձնեն: Այս տեսակ զէնքերու մէկ մասին վրայ կառավարութեան տեղեկութիւն տրուած ըլլալով՝ ամէն անոնք որ նախապէս ծածկելու գաղափարով, չեն յանձներ եւ յետոյ կառավարութեան միջոցաւ երեւան կը հանուին՝ խիստ պատասխանատուութեան տակ պիտի մնան եւ պատժուին:

7. Ճանապարհին հայերը կողոպտելու, սպաննելու եւ այլ եւ այլ նպատակներու համար անոնց վրայ յարձակողներուն դէմ ժանդարմաները ու զինուորները պարտաւոր են եւ արտօնուած զէնք գործածելու այդպիսի անձնաւորութիւնները սպաննել:

8. Օսմանեան պանքային պարտք ունեցողները իրենց պարտուց փոխարէն կրնան ապրանքները յանձնել պանքային պահեստանոցին, միայն կառավարութիւնն իրաւունք ունի գնել զինուորական պիտոյից գործածութեան համար այդ բոլոր ապրանքները, պանքային վճարելով պարտուց գումարը, որուն փոխարէն ապրանքները յանձնուած են: Ուրիշ անձանց եղած պարտքին փոխարէն եւս կարելի է ապրանքներ յանձնել, միայն թէ պարտուց իսկութիւնն պէտք է կառավարութեան միջոցով հաստատուի, այս նպատակին հա-

մար վաճառականին վաւերացուած տետրակները առաջնակարգ փաստեր կը կազմեն:

9. Մեծ եւ փոքր կենդանիները, զորս փոխադրել կարելի չէ, կառավարութիւնը պիտի գնէ:

10. Ճանապարհին վրայ գտնուող գիւղերու, քաղաքներու կառավարութիւններու եւ նահանգներու պաշտօնեաները կարելի եղած օգնութիւնը պիտի մատուցանեն հայ ժողովուրդին:

2[87].

Ռուսական Վայրագութիւններ. Ցաւալի Էջեր

Յոյներու եւ հայերու առաջարկութեամբ Էրքէնս գիւղախումբին վրայ յարձակող ռուսները, նոյն գիւղի բնակիչներէն Իմամօղլուներու զաւակներէն Օսման աղան կը ձերբակալեն եւ իրենց կերակուր պատրաստելու համար կ'առաջարկեն իր կինը բերել եւ մերժելու պարագային կը ստիպեն: Խեղճը ծայրայեղ բռնութեան եւ տանջանքի տակ կինը պահած տեղէն ակամայ կը հանէ: Պատուի թշնամի այս վայրի գազանները կ'ուզեն Օսմանը ճամբել հրամանատարէն կանչուած ես ըսելով: Թշուառ Օսմանը պատահելիքը գուշակած ըլլալով չի հնազանդիր, որուն վրայ կը յարձակին եւ թեւերը կապելէ յետոյ իր աչքին առաջ կնոջ պատիւը կը բռնաբարեն եւ ի վերջոյ ամենազարհուրելի կերպով, այսինքն մարմինը կտոր-կտոր բաժնելով կ'սպանեն:

Կարմիր Դրօշակի ընկերներէն»

Խմբագրութիւնս այս վաւերագիրը շնորհակալութեամբ ստացաւ Արժանապատիւ Տէր-Մեսրոպ քահ[անայ] Մելեանից[88], որ Բաքումից Տրապիզոն էր մեկնել փախստականների օգնութեան գործով: Վաւերագիրս թարգմանութիւն է թուրքերէն բնագրի, որ Տէր-Մեսրոպը ձեռք բերելով՝ թուրքերէնի տեղեակ մի տաճկահայի թարգմանել է տուել, որ եւ անփոփոխ հրատարակութեան ենք տալիս: Առաջին վաւերագրի ապահովացումների կեղծիքը ոչ միայն տեղահանութեան անունով անլուր ջարդերն ապացուցանում, այլեւ Տրապիզոնի թուրք պաշտօնական թերթում հրատարակուած, երկրորդ վաւերագիրը, ուր թուրքը խօսում է հայ եւ ռուսի վայրագութեանց մասին, շատ հասկանալի է թուրք ու քուրդ ամբոխի խժդժութիւնները եւ կոտորածները քաջալերելու:

Բ[89].

Ս. Էջմիածնի Դիւանատան Գրութիւնը Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի Նախագահ Գարեգին Վարդապետին՝ Տրապիզոնի Վիլայէթից Բաքում Ուղարկուած Որբերի Խնամքի Համար Միջոցներ Ձեռնարկելու Մասին

N498 3 Մարտի 1916թ. [Ս. Էջմիածին]

Նորին Ս[ուրբ] Օծութեան[90] հրամանով Դիւանս ուղարկելով սորա հետ Բաքումի Մեսրոպ աւագ քահանայ Մելեանի հեռագրի պատճէն, յանձնարարում է բարձրապատուութեանդ Տփխիսում հոգացողութիւն ունենալ այդ որբերի պահպանութեան համար Պետական նպաստ ստանալու:

Մակագրութիւններ՝ «4 Մարտի 1916», «թ. 546», «Կրկին գրել Մեսրոպ եպիսկոպոսին[91] ի շուտափոյթ տնօրինու[թիւն]ք», «75/914»:

Գ[92].

Ս. Էջմիածնի Դիւանատան Գրութիւնները Վրաստանի Եւ Իմերէթի Հայոց Թեմի Առաջնորդ Մեսրոպ Եպիսկոպոս Տէր-Մովսիսեանին, Մեսրոպ Ա. Քհնյ. Մելեանին 5000 Ռուբլի Ուղարկելու Եւ Վերջինիս Այդ Մասին Տեղեկացնելու Վերաբերեալ

1.

N 504 3 Մարտի 1916 [Ս. Էջմիածին]

Նորին Ս[ուրբ] Օծութեան հրամանով Դիւանս յանձնարարում է Գերապատուութեանդ կարգադրել Ձեր ձեռքի տակ եղած միջոցներից առ այժմ 5000 ռուբ[լի] փոխադրել Բաքում Տ[էր] Մեսրոպ աւագ քահանայ Մելեանին, որպէս զի Տրապիզոնի գրաւելուց յետոյ, գործադրուի այնտեղի եւ ծովամերձ շրջանների ազատուած հայ թշուառների կարիքների վրայ:

Անկախ դրանից, Դիւանս խնդրում է Գերապատուութեանդ յայտնել, արդեօ՞ք պէտք եղած ժամանակ Բաքումի Տ[էր] Մեսրոպ աւագ քահանան այժմէն իսկ կարող կը լինի՞ գնալ անձամբ նոր գրաւուած վայրերը՝ հայերին օգնութիւն հասցնելու գործով:

(*ստորագրութիւնն ընթեռնելի չէ - Ռ.Ս.*)

2.

N 508 3 Մարտի 1916 [Ս. Էջմիածին]

Հայրապետական Դիւանս, ի հետեւումն Ձեր Փետրուարի 26ի N 86 գրութեան, յայտնում է, որ Նորին Սրբութեան հրամանով, սորա հետ միաժամանակ, յանձնարարուեց Վրաստանի Հայոց Թեմական Առաջնորդին առ այժմ փոխադրել Ձեզ 5000 ռուբլի գործածելու Տրապիզոնի եւ ծովամերձ շրջանների հայ գաղթականների կարիքների վրայ:

(*ստորագրութիւնն ընթեռնելի չէ - Ռ.Ս.*)

Դ[93].

Բաքումի Տրապիզոնի Հայրենակցական Միութեան Նամակը՝ Որբերի Համար Գնուած Պարէնի Եւ Նրանց Բաքում Ուղարկելու Մասին

22 Ապրիլի 1916 թ. Բաքում

Սիրելի ընկերներ

Իւր ժամանակին ստացայ N 7 Ձեր նամակը եւ 106 որբերու ցուցակը. Ձեր նամակով պահանջած մթերքները նոյն օրը գնուած եւ պատրաստուած է, սկսեալ ալիւրից, շաքարից եւ այլն, բայց ինչպէս Ձեզ ալ յայտնի պիտի լինի, վերջերս քաղաքս մեծ կարիք ունէր մթերքներու, մանաւանդ ալիւրի, այս պատճառաւ հարկ եղայ նախ Բոսֆորի Քոմիսիայից[94] խնդրել իրաւունք, որպէս զի կարենամք այդ ապրանքները դուրս հանել, իսկ վերջը խնդրել, որպէս զի կարենանք նաւ բառնալ, կը յուսանք, որ այսօր ամէն բան պատրաստ ըլլալով պիտի կարողանամք բառնալ: Ձեզ լաւ յայտնի է, թէ այդ տեսակ գործերը ինչպէս կրիայի քայլերով առաջ կ՝երթան: Հայր Մելեանը մի քանի անգամներ Ուրբաւան[95] գնաց, որպէս զի գործը արագացնելու՝ արդիւնքը գրեթէ ոչինչ եղաւ:

Ձեր մեկնելէն վերջ մենք Բաքումի մէջ դրամ չենք հաւաքած, բայց դրամներ ստացած ենք նոր՝ Սոչիից՝ Հայկական Կոմիտէից երկու անգամով 975 ռուբլի, իսկ Նովորոսիյսկից Միհրան (*ազգանունն ընթեռնելի չէ - Ռ.Ս.*)՝ 700 ռուբլի, որով եթէ դրամի պէտք ունէք, կրկին գրեցէք եւ առաջին առթիւ Ձեզ կ՝ուղարկենք:

Մենք հոս աշխատած ենք, որպէս զի մի քանի ամիսներ մնացող մի քոմիթէ կազմել ու ուղարկել հոտ, որպէս զի եթէ դուք գալու լինէք, նոքա շարունակեն Ձեր գործը, յայտնի է շատ փափագելի էր, որ այդ Քոմիթէն ըլլար տրապիզոնցիներէն եւ բաւական ալ ռուսերէն գիտնային, իսկ եթէ քիչ ըլլան տրապիզոնցիները, ստիպեալ պիտի ըլլամք խնդրելու Տիֆլիսից, որպէս զի օգնի մեզ, արդէն կը խնդրէինք Ձեզ, որպէս զի մինչեւ Քոմիթէն Տրապիզոն գալուն դուք Ձեր ազգօգուտ զբաղումները շարունակէիք ու Բաթում գալերնիդ առայժմս յետաձգէք:

Պարոն Յարութիւնի բերած ցուցակը նոյնպէս ստացանք, եթէ այդ ցուցակը կազմելէ վերջը նոր [որբեր] գտնուած են, խնդրէինք, որ փութով մեզի յայտնէք, զի ժողովուրդը անհամբեր կը սպասէ նոր ցուցակներ կարդալու եւ նոր անուններ կարդալու:

Մենք կը խնդրէինք, որպէս զի առաջի առիթով մեզ տեղեկացնէիք, թէ մարդիկներու պէտք ունի[՞]ք, որովհետեւ փափագողներ բաւական շատ կան, մենք այնպէս կը կարծենք, որ կարելի [է] խնդրել անոնց համար հրաման, որպէս զի Տրապիզոն մեկնին:

Բարեւելով Ձեզ եւ մաղթելով յաջողութիւն:

Մնամք յարքանօք՝ ի դիմաց Տրապիզ[ոնցիներու] Հայրենակ[ցական]
Միութեան (*ազգանունն ընթեռնելի չէ - Ռ.Մ.*)

Ե[96].

Տրապիզոնի Հայկական Կոմիտէի Նախագահ Մ. Էմերեանի Զեկոյց Մեսրոպ Ա. Քհնյ. Մելեանին՝ Կոմիտէի Աշխատակիցների Կեցութեան Համար Ծախսուած Գումարը Վճարելու Մասին

Armyanskiy Komitet V Trapezunde[97]

N 41 3 Յունիսի 1916 թ. [Տրապիզոն]

Արժանապատիւ Տէր Մեսրոբ Ա[լագ] ք[ա]հ[ա]ն[այ] Մելեան
Հայոց Հոգեւոր Իշխանութեան Եւ Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական]
Ընկ[երութեան] Եւ Հայկ[ական] Կենտ[րոնական] Կոմիտէի[98] Լիազօր
Աստ

Մեր պաշտօնեաներուն որոշ ռոճիկներ նշանակուած չըլլալուն, ներկայիս կը դիմենք Ձեզ ի հաստատութիւն առանձին ներկայացուցած հետեւեալ երեք հաշուեցուցակները վճարելու համար:

N 1 Պ. Տիգրան Եսայեան, անդամ ուբռաւայի[99] կից կազմուած յանձնաժողովի: 1916 Ապրիլ 25էն Յունիս 2 պաշտօնավարութեան ժամանակի անձնական ծախքեր օրական 3 ր[ուբլի] էն 120 ր[ուբլի][100]:

N 2 Պ. Մանաթ Ճերմակեան, հսկիչ բանուորներու եւ զանազան յանձնարարութիւններ կատարող: Մայիս 1էն Յունիս 2 պաշտօնավարութեան ժամանակի անձնական ծախքեր օրական 1 [ռուբլի] 60 էն 52 ր[ուբլի] 80 կ[ոպէկ]:

N 3 Պ. Պետրոս Օտապաշեան, վերահսկիչ բանուորներու եւ զանազան յանձնարարութիւններ կատարող: Մայիս 1էն Յունիս 2 պաշտօնավարութեան ժամանակի անձնական ծախքերը 39 ր[ուբլի]:

Մատուցանելով յարգանքներս նախագահ Հայկ[ական] Կոմիտէի՝ Մ.
Էմերեան (*ստորագրութիւն*)

Մակագրութիւններ՝ «Ստացայ 3 Յունիսի»: «N 18: Ոչինչ չունենալով ընդդէմ, յանձնարարում եմ Հայկական կոմիտէի պ. Նախագահին բացատրել ըստ ի-

րենց յայտնած պահանջի: Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանայ] (*ստորագրութիւն*):
3 Յուլիսի 1916 թ., Տրապիզոն»:

Զ[101].

Ս. Գափամաճեանի Դիմումը Հայկական Կոմիտէի Նախագահ Մեսրոպ Ա. Քհնյ. Մելեանին «Գափամաճեան Ընկերութեան» Ապրանքների Տնօրինութեան Հետ Կապուած Վիճելի Խնդիրները Լուծելու Մասին

10 Յունիսի 1916 թ. Տրապիզոն

Արժանապատիւ Հայր Մելեան

Նախագահ Հայկական Քոմիթէին

Ըստ Ձեր Սրբութեան տուած որոշման, ստանձնած եմ արդէն մեր գործակատար Միքայէլ Կորկոտեանի գրասենեակի եւ Ամբարի մէջ գտնուած հակերը, որոնք ինչ ինչ պարագաներ նկատի ունենալով, կը խնդրէի, որ արտօնէիք անմիջապէս դրամի վերածել:

Այժմ տեղս եկած է Արմենակ Հիւսեան եւ կը ներկայանայ իբրեւ ընկեր նախկին Գափամաճեան Ընկերութեան եւ կ'ընէ կարգ մը պահանջներ, որոնք ըստ իս իրաւացի չեն:

Նախկին Գափամաճեան Ընկ[երութիւնը] կազմուած էր չորս անդամներէ, որ[ոն]ք էին՝

1. Պետրոս պէյ Գափամաճեան
2. Մարտիրոս Կիւլիմեան
3. Մկրտիչ Հիւսեան
4. Իգնատիոս Հիւսեան (որն ունէր երկու եղբայր, մին Արմենակ եւ միւսը՝ Հմայեակ, որոնք թոշակաւոր պաշտօնեայ էին):

Հայրս սպանուելէ վերջ, Ընկերութիւնը շարունակուեցաւ առանց նոր պայմանագրութեան եւ Գափամաճեան անուն ֆիրմային Մանչեստրէն եւ Պոլիսէն նոր ապրանք եկած կամ ղրկուած է իմ անձիս հանդէպ ունեցած վստահութեան եւ միայն ինձ կը ճանաչեն իբր պատասխանատու, ինչպէս կը տեսնաք ներփակ նամակէն (*նամակը բացակայում է - Ռ.Մ.*) եւ ընդհ[անուր] հաշուեկշռէն: Ես կը ցանկանամ, որ տիար Մարանեանի ամբողջ հաշիւը նախ ինձ յանձնուի՝ իրեն մեզ ղրկած եւ տեղս գտնուած իւր ապրանքներէն եւ ապա մնացեալ ապրանաց համար կարգադրութիւն լինի՝ դեռ կան շատ պարտքեր, որ[ոն]ք ամէնքն ալ ինձմէ պիտի պահանջուի:

Սպասելով Ձեր Սրբութեան կտրուկ որոշման, մնամ որդիական խ[որին] յարգանօք՝

Սէթ Գափամաճեան [ստորագրութիւն]

Մակագրութիւններ՝ «Որոշումը ես չեմ տուած, այլ ոստիկանապետի նախագահութեամբ կազմուած խառն խորհրդակցութիւնը, որին մասնակցում էին հայ կոմիտէի, քաղաքային վարչութեան եւ 8 անձեայ կոմիսսիայի[102] անդամները:

Յանձնում եմ Տրապիզոնի հայ կոմիտէտին:

Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանա] Մելեան (*ստորագրութիւն*)»

Է[103].

Ա. Տէր Առաքելեանի Նամակը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին Գ. Վարդեւանեան-Մարութեանի Մահուան Վերաբերեալ Պաշտօնական Գրութիւն Ուղարկելու Մասին

16 Յունիսի 1916 թ. Սոչի

Տրապիզոնի Հայկական Կոմիտէին

Շուրջ մի ամիս է, որ Ձեզ ուղարկել էի մի նամակ եւ խնդրել էի, որ պատասխանէք ըստ կարելուոյն շուտ, որովհետեւ գործը ստիպողական է: Եթէ նամակը չէք ստացել, կրկնում եմ բովանդակութիւնը, իսկ եթէ ստացել էք, խնդրում եմ փութացէք ուղարկել պահանջուած գրութիւնը:

Գործը հետեւեալն է: Տեղիցս Գալուստ Վարդեւանեան Սորումաթեանը պատերազմից առաջ իւր եղբօր հետ եկել էր Տրապիզոնի իւր հայրենի Սկաֆիա գիւղը: Հայկական սարսափների ժամանակ, ինչպէս լսում է, նա էլ սպանուեց: Տեղումս յիշեալ Գալուստը ունի կին եւ երեխաներ, որոնք մնացել են անմխիթար դրութեան մէջ: Բանքայում ունի մի քանի հարիւր ռուբլի, սակայն նրա ընտանիքին չեն տալիս այդ փողը մինչեւ որ Գալուստի սպանուած կամ մեռած լինելը չհաստատուի քահանայից եւ տեղական կոմիտէից վաւերացուած փաստաթղթով, ուստի խնդրում եմ Ձեզ մասնաւորապէս, որ տեղեկանալով նրա մահուան մասին ուղարկէք պահանջուած փաստաթուղթը:

Մահուան վաւերացրած թուղթը կ'ուղարկէք Սոչիի տեղական կոմիտէին կամ ինձ:

Վերջացնելով գրութիւնս, մնամ յարգանօք՝ Անդրէաս Ա. Առաքելեան

(*ստորագրութիւն*)

Մակագրութիւն՝ «Պատասխանուած է՝ N 232 և 4 Յուլիս 1916 նամակով»:

Ը[104].

Հ. Ղ. Փալանճեանի Խնդրանքը Հայկական Կոմիտէին՝ Եղբօր Հաստատութեան Մէջ Եղած Ապրանքը Պահպանելու Մասին

19 Դեկտեմբերի 1916 թ. Երզնկա

Յարգելի Տեարք

Տեղ[ական] Հայկական Քոմիթէ

Տրապիզոն

Թերեւս իմացած էք ողջ մնալս, շատոնց կը փափագէի հոտ գալ մեր գործերու համար, սակայն ալ աւելի կարեւոր գործերու պատճառաւ սպասեցի:

Ստացածս տեղեկութեամբ, եղբայրս Պրն. Յակոբի գացան օսմ[անեան] կառավարութեան կնիքովն կը մնայ կարգ մը ուրիշ բաներով կաթոլիկներու առաջնորդարանին մէջ, մօտ ատենէ ես ինքս հոտ գալու մտադիր լինելուս, կը խնդրեմ Ձեզմէ, որ նոյն հսկողութիւնը ընէք ապահով մնալու եւ չբացուելու համար մինչ իմ գալս:

Յարգանքներ՝ Յովհ. Ղ. Փալանճեան (*ստորագրութիւն*)

Յ. Գ. Ներփակ նամակն իր հասցէին հաճիք հասցնել:

Թ[105].

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տրապիզոնի Ներկայացուցիչ Մեսրոպ Ա. Քհնյ. Մելեանի Գրութիւնը Հայկական Կոմիտէի Նախագահ Ա. Առաքելեանին Ներկայացուցիչ Ուղարկել Փախստականներին Օգնող Յանձնաժողովում Մասնակցելու Մասին

[դրոշմ]
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՈԳԵՒՈՐ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՏՐԱՊԻԶՈՆԻ
N 39 12 Յունուարի 1917 թ. Տրապիզոն

Տրապիզոնի Հայկական Կոմիտէի Նախագահ
Մեծ[արգոյ] Նախագահ Պ. Արշակ Առաքելեանին

Տեղուոյս Յունաց Միտրոպոլիտի նախագահութեամբ, ինչպէս հաղորդեց ինքը, կազմուած է յատուկ խորհրդակցութիւն փախստականների ու պատերազմից վնասուածների վիճակը բարուօքելու նպատակով: Այդ խորհրդակցութեանը մեր կողմից մասնակցելու ու մեր փախստականների մասին պարտ ու պատշաճը հոգալու համար առաջարկում եմ Ձեզ լինել այնտեղ ներկայացուցիչ, իսկ եթէ ռեւէ պատճառով չէք կարող, հաճեցէք յանձնել այդ պաշտօնը Կոմիտէիդ փոխ-նախագահ պ. Միհրդատ Էմերեանին:

Ներկայացուցիչ Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանայ] Մելեան
(*ստորագրութիւն*)

Ժ[106].

Տրապիզոնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ներկայացուցիչ Մեսրոպ Ա. Քհնյ.ի Գրութիւնը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին Փոխանցուած Գումարը Ստանալու Մասին

N 53 17 Փետրուարի 1917 թ. Տրապիզոն

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստացայ Տրապիզոնի Հայկական Կոմիտէից ի հաշիւ ազգային եկեղեցապատկան կալուածների ստացած 295 ռուբլու եւ սրանից եկեղեցու բակի պատի վրայ ծախսուած 140 ռուբլու հաշուեյարդարից մնացած գումարը մի հարիւր յիսուն եւ հինգ ռուբլի:

Ներկայացուցիչ [Կաթողիկոսի]՝ Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանայ] Մելեան
(*ստորագրութիւն*)

ԺԱ[107].

Պ. Գարաքեհեայեանի Դիմումը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին Թոյլատրելու Որբանոցում Գտնուող Դստերը Իրեն Յանձնելու Մասին

12 Յունուարի 1917 թ. Տրապիզոն

Հայկական Կոմիտէի Յարգելի Լիազօրին

Քաղաքների Միութեան Տրապիզոնի որբանոցում գտնւում է իմ աղջիկը՝ Մաքրուհի Պետրոսեան Գարաքեհեայեանը (5) հինգ տարեկան: Բայց որբանոցում կոչում են Գոհարիկ, չգիտնալով իսկական անունը:

Այժմ տեսնելով նրան ճանաչեցի, որով խնդրում եմ հարկ եղածը տնօրինել ստանալու համար իմ երեխան:

Պետրոս Գարաքեհեայեան (*ստորագրութիւն*)

Մակագրութիւն՝ «Կը հաստատենք, որ յիշեալ Մաքրուհի Գարաքեհեայեանը Պետրոս Գարաքեհեայեանի աղջիկն է:

Անիֆա գիւղի մուխթար՝ Յակոբ Գարաքեհեայեան (*ստորագրութիւն*)
Պ. Օտապաշեան (*ստորագրութիւն*)»:

ԺԲ[108].

Ստացագիր Ստացուած Շաքարի Մասին

28 Մարտի 1917 թ. Տրապիզոն

Գաղթականների եւ որբերի համար Տիրուհի Մելեանէ ստացած եմ 15 (պաշգա)[109] յական ֆունտանոց շաքար:

Համբարձում Հեքիմեան (*ստորագրութիւն*)

ԺԳ[110].

ՀՅԴ Տրապիզոնի Կոմիտէի Խնդրանքը Հայկական կոմիտէին Փոխարինաբար 150 Ռուբլի Տալու Մասին

N 3 13 Ապրիլի 1917 թ. Տրապիզոն

Տրապիզոնի Հայկական Կոմիտէին

Սրանով խնդրում ենք Տրապիզոնի ՀՅԴ Կուսակցութեան փոխարինաբար տալ (150) մի հարիւր յիսուն ռուբլի:

Նախագահ՝ Ս. Ճաղարեան (*ստորագրութիւն*)
Քարտուղար՝ Բժ. Ե. Ղազարեան (*ստորագրութիւն*)

ԺԴ[111].

Օրտուէն Եկող Գաղթականներու Անունները

25 Յունիսի 1917 թ. [Տրապիզոն]

1. Հրանդ Յարութիւն Կիւրիւնեան	25 տ[ա]ր[ե]կ[ան]	Օրտու	քաղաք
2. Նուպար Գէորգ Չիթճեան	16 -,,-	-,,-	-,,-
3. Պարոյր Սիրաք Ճըրեան	16 -,,-	-,,-	-,,-
4. Սիրանոյշ Գրիգոր Ճգնաւորեան	25 -,,-	-,,-	-,,-
5. Տիգրանուհի Խաչիկ Մազմանեան	25 -,,-	-,,-	-,,-
6. Գեղուհի Խաչիկ Կէքեմեան	15 -,,-	-,,-	-,,-
7. Պերճուհի -,,- -,,-	17 -,,-	-,,-	-,,-
8. Արփինէ -,,- -,,-	17 -,,-	-,,-	-,,-
9. Վարդուհի Համբարձում Շեհրիկեան	14 -,,-	-,,-	-,,-
10. Միհրան Սեպուհ Ճգնաւորեան	7 -,,-	-,,-	-,,-
11. Արամ -,,- -,,-	6 -,,-	-,,-	-,,-
12. Սիրանոյշ Մարգար Սերճէնեան	18 -,,-	-,,-	-,,-
13. Զարուհի Յովակիմ Յովակ[իմ]եան	18 -,,-	Տրապիզոն	-,,-
14. Հրանդ Արսէն Հապէտցի	6 -,,-	Օրտու	-,,-

ԺԵ[112].

Երզնկայէն Եկող Գաղթականներ

16 Յունիս 1917 թ. [Տրապիզոն]

1. Սրբուհի Խաչատուր Թոփալեան	27 տ[ա]ր[ե]կ[ան]	Թոփայլի	գիւղ
2. Կարապետ Սեդրակ -,,-	6 -,,-	-,,-	
3. Իւղաբեր Յարութիւն -,,-	27 -,,-	-,,-	
4. Անդրանիկ Միսակ -,,-	4 -,,-	-,,-	
5. Մարիամ Առաքելեան	21-,,- (հօր անուն Կարապետ),	Սիւրմենէ	
6. Էլմաս Յարութիւն Տիգրանեան	26 -,,- Կրոմիլ Արտասայի գեղէն	ազատուող	
7. Խորեն Մարտիրոս Պրօշեան	14 տ[ա]ր[ե]կ[ան]	Շէյրանցի	

ԺԶ[113].

Սուխումի Տրապիզոնցիների Լիազօր Նախագահի Գրութիւնը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին՝ Գաղթականներին Իրենց Բնակավայրերը Վերադարձնելու Մասին

5 Մարտի 1917 թ. Սուխում

Հայկական Կոմիտէին եւ Բարեգործական Ընկերութեան

Յայտնի է, որ Տրաբիզոնում եւ մանաւանդ գիւղերում բնաջնջուած հայ ընտանիքների անդամներից կէս մասը (որդի, եղբայր, հայր եւ այլն) գտնւում է ռուսական Սեւծովափնեայ Խրիմի եւ Կուբանեան շրջաններում, որոնք սկզբից ի վեր շատ սերտ կապ պահպանած են ծննդավայրում մնացածների հետ, նիւթապէս աջակցել են տների շինութեան, դպրոցների բացման, տուրքերի վճարման եւ երբ հնարաւոր եղել է՝ փոխադարձաբար եկել գնացել էին:

Այժմ շատ կենսական հարց է ծագել՝ գալ՝ տիրանալ իրենց սեփական հողերին, վար ու ցանք անել, իրանց կաղինի այգիները կարգի բերել, բերքը հաւաքել եւ փչացումից ու գրաւումից ազատել միլիոններ արժեցող այդ անշարժ կայքերը: Դժբախտաբար մինչեւ այժմ պաշտօնապէս չարտօնուեց բուն տրաբիզոնցի հայերի երկիր ազատ մուտքը, իսկ Տրաբիզոնում գործող ազգ[ային] մարմինները ոչ մի լուրջ ձեռնարկ չարին սերտ կապ ստեղծելու դուրսը գտնուող տասնեակ հազարաւոր տրաբիզոնցիների հետ եւ ոչ մի տեղեկութիւն չտուին դրսեցիներին շահագրգռող խնդիրների մասին, որոնք կարծում եմ աւելի յաջող լուծում կը ստանայ կամ դեռ կը ստանան, եթէ ցանկալի կապը պահպանուի նրանց մէջ:

Այդ նպատակով Սուխումի, Սոչիի եւ Ադլէրի շրջանի տրապիզոնցիներ (շուտով կը միանան միւս շրջաններն էլ) խորհրդակցութիւններ ունեցան եւ արդէն ընտրեցին լիազօր յանձնաժողով մը Սուխումում, որ կապ պէտք է պահպանի դրսի տրապիզոնցիների եւ Տրապիզոնում գործող մարմինների հետ, ի հարկին աջակցելով բարոյապէս եւ նիւթապէս այդ մասին հաղորդելով ձեզ, խնդրում ենք մեզ տեղեկացնել.

1. Մինչեւ օրս ի՞նչ գործողութիւններ կատարուել են թէ քաղաքի եւ թէ գիւղերի կալուածների սեփականութիւնը հաստատելու համար հայերի վրայ:

2. Այդ գործողութիւնները ո՞վ կատարել է, կառավարութիւնը, թէ՞ ազգ[ային] մարմինները:

3. Եթէ Կոմիտէն կատարել է կառավարութիւնը սանկցիա[114] տուե՞լ է եւ ցուցակները յանձնուե՞լ են կառավարութիւն:

5. Կոմիտէն եւ Կ.Հ.Բ. Ընկեր[ութեան] ճիւղը ի՞նչ է մտածում կառավարական այն կարգադրութեան մասին, որ որոշ ժամանակամիջոցէ դրամ [տրամադրի] ամայի հողերի մշակման համար, հակառակ պարագայում, սպառնալով իր կողմից անել տալ վարուցանքը եւ արդեօք դրանով չի՞ խախտւում սեփականութեան իրաւունքը եւ ապագայ թիւրիմացութիւնների պատճառ դառնայ:

6. Գրաւած վայրերում սեփականութեան իրաւունք հաստատելը (քանի որ կալուածաթղթերը փչացել են) մեծ մասամբ կախում ունենալով հողատիրոջ ներկայութիւնից, ազգ[ային] մարմիններդ ի՞նչ էք ծրագրում գէթ մասնակի կերպով թոյտուութիւն ձեռք բերելու այնպիսի գիւղացիների համար, որոնց գիւղերը հացի նշոյլ չկայ եւ ուրեմն ամենաշատ ենթակայ են կորստի:

7. Ազգ[ային] մարմինները չե՞ն մտածում կազմակերպել արդեօք աշխատաւորական խմբեր այդտեղի անգործ մնացած երկրագործներից, որոնք կը կարողանային հսկայ արդիւնք բերել եւ իրանց ապրուստը հոգալուց յետոյ՝ խոշոր բաժին մը ձգել ազգ[ային] հաստատութիւններին:

Այս հարցերի մասին կրկին խնդրում ենք չզլանալ որոշակի տեղեկացնել մեզ, վստահ լինելով, որ փոխադարձ աջակցութեամբ կարելի է շատ դժուարութիւններ հարթել եւ ամէն շրջանից շատ եւ արագ վերաշինել Տրապիզոնը, որովհետեւ դրսիները մեծ մասամբ հնարաւորութիւն ունեն ամէն նիւթական զոհողութեան ընդառաջ գնալու:

Չմոռանանք աւելացնել, որ յանձնաժողովի անդամները Տրապիզոնի գերիների մասին դեռ Ձեր կոչը չստացուած արդէն ձեռնարկել էին գործի եւ այժմ տեղական կոմիտէի հետ միասին շուտով կը ձեռնարկէ հանգանակութեան եւ յոյս ունի, որ զգալի արդիւնք ձեռք պիտի բերէ:

Յարգանքներով՝ Տրապիզոնցիների Սուխումի լիազօր նախագահ՝

Գ. Յովսեփեան (*ստորագրութիւն*)

Քարտուղար՝ Արմէն (*ազգանունն ընթեռնելի չէ - Ռ.Մ*)

Հասցէ՝ Sukhumi, Podgornaya, Dacha Lamakina, Armjanskiy priyut,

K. Ovsepian[115]

ԺԷ[116].

Տրապիզոնի Հայկական Կոմիտէի Վերաքննիչ Մարմնի Անդամ Ա. Կոթիկեանի Դիմումը Կոմիտէին՝ Իր Զբաղեցրած Պաշտօնից Հրաժարուելու Մասին

28 Մարտի 1917 թ. Տրապիզոն

Հրաժարագիր Ուղղուած Տրապիզոնի Հայկ[ական] Կոմիտէին

Քաղաքիս մէջ այսուհետեւ մշտական չի մնալուս պատճառաւ, չպիտի կրնամ ծառայել «կոմիտէի վերաքննիչ մարմնի» մէջ, հետեւաբար ներկայիս կու տամ հրաժարականս:

Յարգանքներովս՝ Ա. Կոթիկեան[117] (*ստորագրութիւն*)

ԺԸ[118].

Հաշուետուութիւն Արուած Ծախսերի Մասին

Armyanskiy Komitet V Trapezunde

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՏՐԱՊԻԶՈՆԻ

23 Ապրիլի 1917 թ. Տրապիզոն

Վճարուած է Արշաւիր Էլեանի Երզնկայէն 16 հայ-գաղթականներ Տրապիզոն փոխադրելու երկու ֆուրկոնի[119] եւ ուտեստի համար հարիւր քառասուն մէկ ր[ու]բ[լի] (141, 70 կ[ոպէկ]) եօթանասուն կոպէկ:

Ստացայ՝ Ա. Էլեան (*ստորագրութիւն*)

Ա. Առաքելեան (*ստորագրութիւն*)

ԺԹ[120].

Մեսրոպ Ա. Քհնյ. Մելեանի Գրութիւնը Հայկական Կոմիտէին Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէի Կողմից «Ռեժի» Ընկերութեան Պահեստում Գտնուող Եւ Հայերին Պատկանող Ծխախոտը Իրեն Յանձնելու Մասին

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

N 428 15 Հոկտեմբերի 1917 թ.
Թիֆլիս

Տրապիզոնի Հայկական Կոմիտէին

Կովկասի Յատուկ Կոմիտէն իր գրութեամբ յանուն տեղուոյդ «Ռեժ»ի Ընկերութեան, ի 10 Հոկտեմբեր ամսոյս N 10319, հաստատում է իր արած որոշումը հայապատկան ծխախոտը ազգի Վեհափառ Կաթողիկոսի ներկայացուցչին յանձնելու վերաբերման մասին: Ուստի ներփակ դնելով սոյն թուղթը, առաջարկում եմ յղել այն «Ռեժ»ի Ընկերութեան ու ի լրումն իմ գրութեան առ նոյն ընկերութեան յ 8ն Օգոստ[ոսի] տարուոյն N 216 եւ խնդրել նրա պարտ ու պատշաճ կարգադրութիւնը:

Ներկայացուցիչ [Կաթողիկոսի]՝ Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանա] Մելեան
(*ստորագրութիւն*)

Ի[121].

Կարինի Հայ Գաղթականների Կոմիտէի Գրութիւնը Մեսրոպ Ա. Քհնյ. Մելեանին՝ Բռնագաղթուած 60 Տրապիզոնցի Հայերին Պ. Օտապաշեանի Ուղեկցութեամբ Տրապիզոն Տեղափոխելու Եւ Ծախսուած Գումարը Փոխանցելու Մասին

[դրոշմ]

Erzerumskiy Komitet Po Prejreniyu Armyan Bejentsev

Կարնոյ Հայ Փախստականների Կոմիտէ

17 Հոկտեմբերի 1916 թ. Էրզրում

Գերապատիւ Տէր Մեսրոպ Աւագ ք[ա]հ[ա]ն[ա]յ Մելեան

Տեղս գտնուած 60 տրապիզոնցիները, որոնք եկել են Երզնկայից, այս անգամ Տրապիզոնի հայրենակիցներու խնդրանքին վրայ, բոլորն էլ յանձնեցինք Պրն. Պետրոս Օտապաշեանին:

Գաղթականներու փոխադրութեան հ[ա]մ[ա]ր առհաշիւ յիշեալ Օտապաշեանին վճարեցինք (300) երեք հարիւր ռուբլի, որ պիտի գանձի այդտեղ գտնուած իրենց հայրենակիցներից:

Ուստի պիտի խնդրէինք Ձեզանէ, որ հետամուտ լինէիք ու վերոյիշեալ գումարը գանձելով, յարմար առթիւ մեզ փոխադրէիք:

Կը յայտնենք մեր շնորհակալութիւնները:

Մնամք յարգանօք՝ ի դիմաց Կարնոյ Հայկ[ական] Կոմիտէին՝
Գ. Թէրզեան (*ստորագրութիւն*)

կնիք [«Կարնոյ Հայ Փախստականների Կոմիտէ – Erzerumskiy Komitet Po Prejreniyu Armyan Bejentsev

ԻԱ[122].

Տրապիզոնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ներկայացուցիչ Մեսրոպ Ա. Քհնյ.ի Գրութիւնը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին Լքեալ Գոյքի Վերաբերեալ Կովկասեան Յատուկ Կոմիտէի[123] Կողմից Արուած Պարզաբանման

N 438 20 Հոկտեմբերի 1917 թ. Տրապիզոն

Տրապիզոնի Հայկական Կոմիտէին

Կովկասեան Յատուկ Կոմիտէն, Հոկտեմբերի 2ի N 427 իմ հարցումին, գրութեամբ 12 Հոկտ[եմբերի] N 10492, տալիս է ինձ յետագայ պատասխանը. «Այսու հաստատած եմ, որ բոլոր զինուորական, թէ քաղաքացիական անձերն ու հաստատութիւնները պարտաւոր են ըստ պատշաճաւոր գնահատու-

թեան վճարելու սպանուած կամ անյայտ կորած հայերին պատկանող շարժական ու անշարժ գրաւած ստացուածքների համար եւ վճարը պէտք է հատուցուի Ձեզ՝ իբրեւ ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցչի կամ Տրապիզոնի Հայկական Կոմիտէին»:

Յղելով ընդ այսմ յիշեալ գրութեան պատճէնը, առաջարկում եմ միջոցներ ձեռնարկել դիմելու ուր որ անկ է ու ձեռք բերելու մեզ հասանելիք գումարները: Ի տեղեկութիւն հաղորդում եմ, որ նոյն իմաստով ես դիմած եմ՝ **ա.** Ռեժիի Ընկերութեան տեսչին՝ տարուոյս Օգոստ[ոսին] N 216 գրութեամբ, **բ.** քաղաքային ինքնավարութեան՝ Օգ[ոստոսի] 8ի N 218, **գ.** Տրապիզոնի ռեկուեզից[իոն] կոմիսսիային[124] 9 Օգ[ոստոսի] N 927 եւ **դ.** Տրապիզ[ոնի] ամրոցային շրջանապետին՝ 9 Օգ[ոստոսի] N 224 գրութեամբ: Ուղարկած եմ նրանց Կով[կասեան] Կոմիտ[էի] N 5567 վկայականի վաւերացուած պատճէնները, որից մի օրինակ դնում եմ սրա հետ (***նշուած օրինակը բացակայում է - Ռ.Մ.***):

Ներկայացուցիչ Կաթողիկոսի՝ Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանա] Մելեան
(*ստորագրութիւն*)

ԻԲ[125].

Մեսրոպ Ա. Քհնյ.ի Գրութիւնը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէի Հրամանը Տրապիզոնում Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ներկայացուցչի Կողմից Տրուած Վկայականները Տրապիզոնի Եւ Բաթումի Խորհուրդների Կողմից Ճանաչելու Մասին

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

N 439 20 Հոկտեմբերի 1917 թ. Տփղիս

Տրապիզոնի Հայկական Կոմիտէին

Հաղորդում եմ ի գիտութիւն Կոմիտէիդ, որ Կովկասեան Յատուկ Կոմիտէն, յարգելով ամսոյս 2ի N 426, իմ միջնորդութիւնը, հրամանագրով յանուն Տրապիզոնի եւ Բաթումի զինուորական, բանուորական ու շինա[րարա]կան ներ-կայացուցիչների խորհրդի գործադիր Կոմիտէների – ի 11 Հոկտեմբերի NN 10447 ու 10448, կարգադրում է ճանաչել իմ կողմից տրուած վկայականները հաւասարազօր զեմստուօների[126], Քաղաքների Միութեան, Զեմգօրի[127] եւն. հաստատութիւնների կողմից տրուած վկայականներին, ուստի եւ անարգել թոյլ տալ Տրապիզոն մտնելու եւ ելնելու այն պաշտօնական անձանց, որոնք ծառայելու կը լինեն Հայկական Կոմիտէի, Բարեգործական Ընկերութեան, Եղբայրական Օգնութեան, Եկեղեցական Շինութեան Վարչութիւնների մէջ:

Ներկայացուցիչ Կաթողիկոսի՝ Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանա] Մելեան
(*ստորագրութիւն*)

ԻԳ[128].

Տրապիզոնի Հայկական Կոմիտէի Կազմած Աշխատավարձի Ցուցակը

Armyanskiy Komitet Ve Trapezunde
Հայկական Կոմիտէ
Տրապիզոնի

N 626 31 Հոկտեմբերի 1917 թ. Տրապիզոն

Կոմիտէի պաշտօնեաներու ռոճիկի պահանջքին կը գրուի հետեւեալ կերպով

Պրն. Ա. Առաքելեան 1917 Հոկտ[եմբերի] 25-31 ռոճիկ 7 օրուան 140 [ռուբլի]
-,,- Վ. Տատուրեան -,,- Սեպտ. եւ Հոկտ. երկու ամսական 600 -,,-
-,,- Ներսէս Դաւթեան -,,- Հոկտեմբեր ամսոյ ռոճիկ 200 -,,-
-,,- Խաչիկ Այտինեան -,,- -,,- -,,- -,,- -,,- 175 -,,-
-,,- Խոսրով Սարգիսեան -,- -,,- -,,- -,,- -,,- 125 -,,-
ԻԴ[129].

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Եւ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Տրապիզոնի Ներկայացուցիչ Մեսրոպ Ա. Քհնյ.ի Գրութիւնը Տրապիզոնի Հայկական Կոմիտէին Վաճառուող Հագուստի Վերաբերեալ

[դրոշմ]
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՈԳԵՒՈՐ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ՏՐԱՊԻԶՈՆԻ
N 77 20 Դեկտեմբերի 1917 թ. Տրապիզոն
Տրապիզոնի Հայկական Կոմիտէին

Բանաւորապէս քանիցս խօսելուց յետոյ, այսու գամ կտրականապէս խնդրելու բնաւ աճուրդի չհանել Կոմիտէիդ իրաւասութեան տակ գտնուած մանուֆակտուրային այն գործուածքները, որոնք կարող են ճերմակեղէնի ու հագուստեղէնի համար պէտք գալ մեր որբերին՝ Կոմիտէդ այդպիսի ապրանքները կարող է վաճառել միմիայն բարեգործական ու այլ այնպիսի հաստատութիւնների վրայ, որոնք պարտք ու պաշտօն ունեն որբերին խնամելու ու այն ոչ աւելի քան ռեկուեզիցիայի[130] նշանակած գնի կրկնակի արժէքը:

Ներկայացուցիչ նաեւ Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] Ը[նկերութեան]՝
Մ[եսրոպ] ա[ւագ] ք[ահանայ] Մելեան [ստորագրութիւն]

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Պատերազմի նախօրեակին Վիլայէթում բնակւում էին մօտ մէկ միլիոն մահմեդական թուրքեր, քրդեր, լազեր եւ այլք, մօտ 250,000 յոյներ եւ 60,000 հայեր (V. Dadrian, *Genotsid Armian: Soderjaniye Prestupleniya* (Հայերի Ցեղասպանութիւնը. յանցագործութեան բովանդակութիւնը), Երեւան, Նահապետ, 2005, էջ 19): Իսկ ըստ Կովկասեան Բանակի Հակահետախուզական Բաժանմունքի (ԿԲՀԲ) աշխատակից, ենթասպայ Տ. Դեւոյեանի՝ 120,000 հայեր (*Armianskii Vestnik* No 43-44, 5 Նոյեմբեր 1917, էջ 9): Տրապիզոն քաղաքի հայ բնակչութեան թիւը եղել է 16000 (Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 155, թերթ 4):
[2] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101:
[3] Նոյն:
[4] Նոյն:
[5] Նոյն, թ. 101 եւ շրջ.:
[6] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101:
[7] Նոյն, թ. 112:
[8] *Հորիզոն*, Թիֆլիս, N 51, 5 Մարտի 1916:
[9] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 112:
[10] Նոյն, թ. 101-102:
[11] Նոյն, թ. 112:
[12] Խոսրով բէկ Սուլթանովը մահմեդական քաղաքական գործիչ էր, մասնագիտութեամբ բժիշկ: Նա եւ իր երկու եղբայրները՝ Սուլթանը եւ Իսքանդարը, յայտնի էին հակահայ հայեացքներով: 1917 Նոյեմբերի 27ի ԿԲՀԲի կողմից կազմուած զեկու-

ցագրում Խոսրով բէկը յիշատակւում է որպէս թուրքական հետախուզութեան լրտես: Նրա գլխաւորած բարեգործական կազմակերպութիւնը լոկ ծածկոյթ էր ռուսական զինուժի մասին հետախուզական տեղեկութիւններ հաւաքելու համար (ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 70, թ. 7): 1919 Յունուարի 16ին ադրբեջանական կառավարութիւնը Խոսրով բէկին նշանակում է Ղարաբաղի եւ Զանգեզուրի ժամանակաւոր զօրավարնահանգապետ: Նա այդ պաշտօնը վարել է մինչեւ 1920 Մայիս: 1920 Մարտի 22ի լոյս 23ի գիշերը նա կազմակերպել է Շուշիի հայկական թաղամասի բնակչութեան զանգուածային ջարդը, որը խլեց աւելի քան 30000 հայի կեանքը: Բաքուում խորհրդային իշխանութիւն հաստատուելուց յետոյ, Խոսրով բէկն իրեն յայտարարել է «Ղարաբաղի Յեղկոմի Նախագահ», սակայն խորհրդային իշխանութիւնների կողմից ձերբակալուել, ապա Ադրբեջանի Յեղկոմի Նախագահ Նարիման Նարիմանովի միջնորդութեամբ ազատուել եւ հեռացել է Պարսկաստան:

[13] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 112 շրջ.:

[14] Նոյն, թ. 102:

[15] *Համբաւաբեր*, Թիֆլիս, N 11, 6 Մարտի 1916, էջ 333-334:

[16] Նոյն, N 12, 6 Մարտի 1916, էջ 369:

[17] *Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում: Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողովածու*, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսեան, Ռ. Գ. Սահակեան, խմբ.՝ Գ. Ներսիսեան, Երեւան, Հայաստան, 1991, էջ 505:

[18] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 30, թ. 54, 59:

[19] Ոստիկանական պաշտօն՝ Ռուսաստանում: Պրիստաւը բացի կարգուկանոնի, ոստիկանական պահակակէտերի հսկումից, հետախուզում էր յանցագործներին եւն.:

[20] *Մշակ*, Թիֆլիս, N 91, 8 Ապրիլի 1916:

[21] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 3:

[22] Նոյն, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 80:

[23] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 16, թ. 12:

[24] *Արեւ*, Բաքու, N 83, 20 Ապրիլի 1916:

[25] 1915 Յուլիսի 7ին Օսմանեան Կայսրութիւնում ԱՄՆի դեսպան Հենրի Մորգընթաուին ուղղուած հաղորդումում, Տրապիզոնի ամերիկեան հիւպատոս Օսկար Հայզէրը յայտնում է, որ հայերին արտաքսելուց յետոյ, 3000 հայ երեխաներ՝ աղջիկները մինչեւ 15, իսկ տղաները մինչեւ 10 տարեկան, իշխանութիւնները պահել են Տրապիզոնում կազմակերպուած որբանոցներում: Նշուած հաստատութիւնները տնօրինում էին թուրքերը, իսկ հսկում՝ ժանդարմները (*Genotsid Armian: Otvetsvennost Turtsii I Opiajatelstva Mirovogo Soobchestva*, Dokumenti I Kommentariy, Red. I Sost. Professor Yuri Barseghov, Gardariki, W 2t, Vol. 1, (Հայերի Ցեղասպանութիւնը. Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ համաշխարհային հասարակայնութեան պարտաւորութիւնները, խմբ. եւ կազմ.՝ պրոֆ. Եուրի Բարսեղով, 2 հատորով, Հտր. 1), Մոսկուա, Գարդարիկի, 2002, էջ 252:

[26] ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 155, թ. 4 շրջ.:

[27] Նոյն, թ. 4:

[28] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 5 շրջ.:

[29] Նոյն, ց. 1, գ. 16, թ. 5 շրջ.:

[30] *Հորիզոն*, N 84, 19 Ապրիլի 1916:

[31] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 56:

[32] *Համբաւաբեր*, N 15, 29 Մարտի 1916, էջ 634:

[33] *Համբաւաբեր*, N 21, 22 Մայիսի 1916, էջ 657:

[34] Նոյն:

[35] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 16, թ. 1 շրջ.-21:

[36] *Համբաւաբեր*, N 29, 17 Յուլիսի 1916, էջ 917:

[37] Նոյն:

[38] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 22, թ. 32, 77:
[39] *Համբաւաբեր*, N 29, 17 Յուլիսի 1916, էջ 917:
[40] ՀԱԱ, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 56:
[41] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 42:
[42] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 5 շրջ.-6:
[43] *Համբաւաբեր*, N 41, 9 Հոկտեմբերի 1916, էջ 1291:
[44] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 17, թ. 1-28:
[45] ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Արխիւ, Լէոյի Ֆոնդ, ֆոնդ 1, ց. 1, գ. 225, թ. 8:
[46] Նոյն, թ. 12-13;
[47] Լատիներէն՝ diversio, որը նշանակում է շեղել: Այն նպատակ ունի հակառակորդի թիկունքում շարքից հանել ռազմական, արդիւնաբերական եւ այլ կարեւորագոյն նշանակութիւն ունեցող կէտերը՝ հաղորդակցութեան ուղիները, կապի միջոցները, զէնքի, զինամթերքի եւ պարէնի պահեստները եւն.:
[48] *Boevaya Letopis Russkogo Flota*, (Ռուսական նաւատորմի մարտական տարեգրութիւնը), Մոսկուա, 1948, էջ 418; *Flot Ve Pervoy Mirovoy Voyne, Tom 1*, (Նաւատորմը Առաջին Համաշխարհային Պատերազմում, Հտր. 1), Մոսկուա, Վոյենիզտաթ, 1964, էջ 483; *Istoriya Pervoy Mirovoy Voyni. 1914-1918, Ve Dvukh Tomakh, Tom 2* (Առաջին Համաշխարհային Պատերազմի պատմութիւնը. 1914-1918 երկու հատորով, Հտր. 2), Մոսկուա, Վոյենիզտաթ, 1975, էջ 278:
[49] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 5:
[50] *Վան-Տուսպ*, N50, 6 Նոյեմբերի 1916, էջ 15:
[51] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 29, թ. 4:
[52] Նոյն, թ. 13 եւ շրջ.:
[53] Նոյն, թ. 7:
[54] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 21, թ. 2-3:
[55] Նոյն, ց. 1, գ. 26, թ. 16-17:
[56] Նոյն, ց. 1, գ. 7, թ. 80 եւ շրջ.:
[57] Նոյն, ց. 1, գ. 26, թ. 61:
[58] Նոյն, ֆ. 654, ց. 4, գ. 12, թ. 57:
[59] *Trapezundskiy Voyenniy Listok,* No 2, 8 Յունուար 1917, էջ 15:
[60] *Աշխատանք*, Երեւան, N 47, 28 Հոկտեմբերի 1917:
[61] Նոյն, ֆ. 57, ց. 2, գ. 1328, թ. 3:
[62] Նոյն, ֆ. 968, ց. 1, գ. 10, թ. 26:
[63] Նոյն, ց. 1, գ. 10, թ. 32:
[64] Նոյն, ց. 1, գ. 10, թ. 81:
[65] Նոյն, ց. 1, գ. 10, թ. 16:
[66] Նոյն, ց. 1, գ. 10, թ. 51:
[67] Նոյն, ց. 1, գ. 25, 1-, 8, գ. 19, թ. 9
[68] Նոյն, ց. 1, գ. 14, թ. 10:
[69] Նոյն, ց. 1, գ. 14, թ. 18:
[70] Նոյն, ց. 1, գ. 10, թ. 11:
[71] Նոյն, ց. 1, գ. 22, թ. 4:
[72] Նոյն, ց. 1, գ. 28, թ. 205:
[73] Նոյն, ց. 1, գ. 27, թ. 44:
[74] Նոյն, ց. 1, գ. 10, թ. 52:
[75] Նոյն, ֆ. 654, ց. 4, գ. 4, թ. 82:
[76] *Համբաւաբեր*, N 47, 20 Նոյեմբերի 1916, էջ 1502. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 11 եւ շրջ.:
[77] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 195, թ. 2:
[78] Նոյն, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 119:

[79] Նոյն, ֆ. 1457, ց. 2, գ. 5, թ. 64:
[80] Նոյն, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 2:
[81] Նոյն, ց. 1, գ. 11, թ. 42:
[82] Նոյն, թ. 55:
[83] Նոյն, թ. 57:
[84] Նոյն, ֆ. 1168, ց. 1, գ. 320, թ. 81:
[85] Նոյն, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 58:
[86] Օսմանեան Կայսրութեան պարտութիւնից յետոյ, կրկին հնարաւորութիւն ստեղծուեց վերսկսել հայութեան փրկութեան աշխատանքները: 1922 Մարտի սկզբի տեղեկութիւնների համաձայն, Տրապիզոնում կային 130 ընտանիք, 80 որբեր եւ 70 որբուհիներ: Նրանց կեցութեան հարցերը հոգացել է Ամերիկեան Նպաստամատոյցը: Վերջինս որբերի խնամքը յանձնում է Գարեգին վարդապետ Խաչատրեանին, սակայն շարունակելով մատակարարել պարէն եւ հագուստ: Սամսոնում ամերիկացիները խնամում էին 400 որբերի: Տրապիզոնի նահանգում իրաւդրութիւնը շարունակում էր մնալ սպառնալից. 1921ից մինչեւ 1922ի ձմեռ սպանուել են 17 հայ: Միաժամանակ իշխանութիւնները բռնութիւններ են գործադրել յոյների նկատմամբ. Քսանթայի շրջանի 6000 յոյներ աքսորուել եւ սպանուել են (*Ճակատամարտ*, Կ. Պոլիս, թիւ 2823, 2 Մարտի 1922):
[87] *Համբաւաբեր*, 8 Մայիսի 1916, N 19, էջ 600-601:
[88] Մեսրոպ աւագ քահանայի կենսագրութեան մասին ունեցած տեղեկութիւնները խիստ աղքատիկ են: ՀԱԱում մեր պրպտումների ընթացքում յաջողուել է յայտնաբերել, որ նա 1913-1914ին եղել է Տրապիզոնի երկսեռ վարժարանների տեսուչ (ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 14, թ. 14):
[89] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 112 եւ շրջ.: Բնագիրը՝ ձեռագիր:
[90] Խօսքը Գէորգ Ե. Սուրէնեանց (Տփղիսեցի) կաթողիկոսի մասին է: Նա 1911-1930՝ եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:
[91] Մեսրոպ Մագիստրոս եպիսկոպոս (արքեպիսկոպոս) Տէր Մովսիսեան (1865-1939): 1913 Յունուարի 18ից մինչեւ 1916ի կէսերը Վրաստանի եւ Իմերէթի, ապա Աստրախանի Հայոց Թեմական առաջնորդն էր: 1917 Դեկտեմբերի 19ին հրաժարուել է Աստրախանի թեմական պաշտօնից եւ նշանակուել Էջմիածնի մատենադարապետ: 1919-1920 եղել է Հայաստանի Պետական Համալսարանի դեկան եւ պրոֆեսոր: 1922 Հոկտեմբերի 28-1926 Ապրիլի 25՝ վարել է Պարսկա-Հնդկաստանի Հայոց Թեմի Առաջնորդի պաշտօնը: Իր պարտականութիւնների կատարմանը կարողացել է ձեռնամուխ լինել միայն 1926 Ապրիլի 25ին: 1924-1926 եւ 1931-1932ին եղել է Գերագոյն Հոգեւոր Խորհրդի գործօն անդամներից մէկը: 1932 Նոյեմբերին առաջադրուել է կաթողիկոսութեան թեկնածու, սակայն ընտրւում է Խորեն Ա. Մուրադբեկեանը: Վերջինիս մահից (6 Ապրիլի 1938) հինգ ամիս անց՝ 1938 Օգոստոսի 17ին ներկայացրել է դիմում հոգեւոր կարգից հրաժարուելու մասին (Սուսաննա Նահապետեան, «Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան. Եկեղեցական Գործունէութեան Մի Քանի Փաստեր», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, N 1, 2009, էջ 27-38):
[92] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1293, թ. 101-102: Առաջինը պատճէն, երկրորդը՝ ձեռագիր:
[93] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 30-31: Բնագիրը՝ ձեռագիր:
[94] Պարէնի Յանձնաժողովից:
[95] Քաղաքապետարան:
[96] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 27: Բնագիրը՝ ձեռագիր:
[97] Տրապիզոնի Հայկական Կոմիտէ:
[98] Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը (ԿՀԲԸ) հիմնուել է 1881 Նոյեմբերի 15ին Թիֆլիսում, բժիշկ Բագրատ Նաւասարդեանի նախաձեռնութեամբ, 1877-1878ի Ռուս-Թուրքական Պատերազմի հետեւանքով Կովկաս գաղթած հայերին

օգնելու համար: Ընկերութիւնը պէտք է լուսաւորութիւն տարածէր եւ նիւթապէս օգնէր Կովկասի եւ Արեւմտեան Հայաստանի հայութեանը: ԿՀԲԸը նիւթական օգնութիւն է ցոյց տուել հայ գրողներին, հրապարակախօսներին, նկարիչներին, երաժիշտներին եւ այլոց: Թոշակ է տրամադրել Ռուսաստանի եւ Եւրոպայի տարբեր բուհերում, Ներսիսեան Դպրոցում եւ Գէորգեան Ճեմարանում սովորող հայ ուսանողների: Ընկերութիւնը պահում էր 140 դպրոց, հրատարակում հայերէն գրքեր, որոնց թւում՝ անվճար դասագրքեր: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին եւ դրանից յետոյ օգնել է հայ փախստականներին եւ գաղթականներին, բացել է դպրոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւ ապաստարաններ: Միջոցներ է հայթայթել հայ ռազմագերիներին օգնելու համար: 1916ին հրատարակել է *Համբաւաբեր* շաբաթաթերթը: Վրաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ, 1921 Մարտի 2ին այն դադարեցրել է իր գործունէութիւնը:

Գաղթականներին եւ կամաւորներին օգնութիւն կազմակերպելու նպատակով, ԿՀԲԸը 1914 Սեպտեմբերի 14ին Թիֆլիսում կայացած համագումարում ընտրում է Հայկական Կենտրոնական Կոմիտէ բաղկացած 24 անդամից: Կոմիտէի անդամներն էին՝ Վրաստանի եւ Իմերէթի Թեմի Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը (պատուոյ նախագահ), Սամսոն Յարութիւնեանը (նախագահ), Ալեքսանդր Խատիսեանը, Յովսէփ Խունունցը, Ա. Մելիք-Ազարեանը եւ ուրիշներ: Ռուսական իշխանութիւնների կողմից պաշտօնապէս ճանաչուել է 1915 Օգոստոսի 30ին եւ ներկայացուցիչ ունէր Ներքին Գործերի Նախարարութիւնում՝ յանձին պետական դումայի անդամ Մ. Աճեմեանի:

[99] Տեղական ինքնավարութեան մարմին:

[100] Ընդգծումները՝ բնագրային:

[101] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 21: Բնագիրը՝ ձեռագիր:

[102] Յանձնաժողովի:

[103] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 33 եւ շրջ.: Բնագիրը՝ ձեռագիր:

[104] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 15: Բնագիրը՝ ձեռագիր:

[105] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 74: Բնագիրը՝ ձեռագիր:

[106] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 75: Բնագիրը՝ ձեռագիր:

[107] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 78: Բնագիրը՝ ձեռագիր:

[108] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 37, թ. 2: Բնագիրը՝ ձեռագիր:

[109] Տուփ:

[110] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 30: Բնագիրը՝ ձեռագիր:

[111] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 26, թ. 34: Բնագիրը՝ ձեռագիր:

[112] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 26, թ. 15: Բնագիրը՝ ձեռագիր:

[113] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 49-51: Բնագիրը՝ ձեռագիր:

[114] Կարգադրութիւն, թոյլտուութիւն:

[115] Թարգմ.՝ Սուխումի, Պոդգորնայա առաջին, Լամակինի ամառանոց, Հայկական ապաստարան, Կ. Յովսէփեանին:

[116] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 12, թ. 41: Բնագիրը՝ ձեռագիր:

[117] Արման Կոթիկեան (1896-1968)՝ հայ դերասան, բանաստեղծ եւ թարգմանիչ: ՀԽՍՀ Ժողովրդական Արտիստ (1967): Ծնուել է Տրապիզոնում: 1919ին մասնակցել է Օտի Սեւումեանի թատերական ներկայացումներին: 1925ին աւարտել է Սորբոնի Համալսարանը: 1932ին Փարիզում հիմնադրել է «Հայ Ժողովրդական Թատրոն»ը: 1936ին աշխատել է Երեւանի Գաբրիէլ Սունդուկեանի Անուան Թատրոնում: Նկարահանուել է մի շարք կինոֆիլմերում՝ «Տժվժիկ», «Կարինէ» եւն.: Հեղինակ է չափածոյ գործերի՝ «Խութեցի Յովնան», «Ակօսներում» եւ «Ֆիրդուսին Եւ Նրա Շահնամէն» ուսումնասիրութեան: Թարգմանել է Էդմոն Ռոստանի *Միրանօ Դը Բերժըրակը*, Էմիլ Զոլայի *Թերէզ Ռաքէնը*: Բեմականացրել է Յակոբ Պարոնեանի

*Առոնին Տեսարաններ*ը, Երուանդ Օտեանի *Թաղականին Կնիկ*ը, Տիգրան Կամսարականի *Վարժապետին Աղջիկ*ը:

[118] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 28, թ. 269: Բնագիրը՝ ձեռագիր:

[119] Կառք:

[120] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 119: Բնագիրը՝ ձեռագիր:

[121] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 11 եւ շրջ.: Բնագիրը՝ ձեռագիր:

[122] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 57: Բնագիրը՝ ձեռագիր:

[123] Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէն հիմնուել է 1917 Մարտի 9ին Թիֆլիսում, ռուսական 4րդ պետական դումայի (խորհրդարանի) պատգամաւորների կողմից: Այն հիմնուել էր լուծարուած Կովկասի Փոխարքայութեան փոխարէն: Կոմիտէի նախագահն էր Վ. Խառլամովը, իսկ անդամները՝ Մ. Պապաջանեանը, Մամէդ Եուսուֆ Ջաֆարովը, Ա. Չխենկելին եւ Կ. Աբաշիձէն: Կոմիտէն լուծարուել է 1917 Նոյեմբերին: Նրա փոխարէն հիմնուել է Անդրկովկասեան Կոմիսարիատը:

[124] Բռնագրաւող Յանձնաժողով:

[125] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 30, թ. 58: Բնագիրը՝ ձեռագիր:

[126] Զեմստուս (ռուսերէն՝ Zemstva-Zemskiye Oochrejdeniya)-տեղական ինքնակառավարման ընտրովի մարմին Ռուսաստանում: Հիմնուել է 1864ին: Տնօրինել է կրթութեան, առողջապահութեան, ճանապարհների շինարարութեան եւ այլ հարցերը: Լուծարուել է 1918ին խորհրդային կառավարութեան հրամանով:

[127] Ճգրիտ անուանումն է՝ Vserossiyskiy Soyuz Gorodov I Zemskiy Soyuz՝ համառուսաստանեան քաղաքների միութիւն, իսկ Zemskiy Soyuz՝ ինքնավարութիւնների միութիւն: Ճշգրիտ անուանումն է՝ Համառու-սաստանեան զեմստուօների միութիւն: 1915 Յուլիսի 10ին նրանք միաւորուել են եւ կոչուել Obyedinyonnyi Komitet Zemskogo I Soyuza Gorodov՝ զեմստուային եւ քաղա-քային միութիւնների միացեալ կոմիտէ - զեմգոր։ Միացեալ կազմակերպութեան նպատակն էր օգնել բանակին՝ մատակարարելով պարէն: Ռուսական բանակի գրաւուած շրջաններում իրականացրել է գիւղատնտեսական աշխատանքներ: Լուծարուել է 1918 Յունուարին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի հրամա-նագրով:

[128] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 7, թ. 77: Բնագիրը՝ ձեռագիր:

[129] ՀԱԱ, ֆ. 968, ց. 1, գ. 11, թ. 17: Բնագիրը՝ ձեռագիր:

[130] Բռնագրաւման:

THE ORGANIZATION OF RESCUE OPERATIONS FOR THE TRABIZON ARMENIANS DURING WWI (1916-1917)

(Summary)

RUBEN SAHAKIAN

During WWI the Armenian population of the Ottoman Empire faced massive deportation and genocide. By the orders of the Young Turk government during Autumn 1914 and 1915, the majority of Armenians living in Western Armenia and other residential areas in Asia Minor was anihilated. The 60,000 Armenian population of the Trabizon Vilayet and city had a similar fate.

The belongings of the deported Armenians were confiscated by the local authorities or looted by the local population. Some native Armenians took refuge in remote mountainous areas and forests and organized self-defense troops.

On April 5, 1916 the Russian army occupied Trabizon. Of the 16,000 city Armenians only 15 women and 50 orphans survived. Of the 46 Armenian villages of the Vilayet, a total of 368 Armenians survived. Some 20,000 took refuge in Russia while all the others were deported or massacred.

To rescue the surviving Armenians the Caucasus Armenian Benevolent Union (*Kovkasi Hayots Baregortsagan Miyutyun*) sent a mission composed of members of its Batumi Chapter, headed by Father Mesrob Melian. The latter became the representative of Catholicos Gevork V of Echmiadzin and established the Trabizon Armenian Committee with the permission of the Russian army command. The Committee rescued some 200 Armenian children who were being forcibly kept in Turkish homes. Most of these children were transported to Batumi, while the remaining ones were settled in Trabizon.

The Committee reclaimed the forfeited possessions of the Armenians including vineyards, lands and buildings, some 1200 houses, numerous shops, workplaces, warehouses, and guesthoses. Keeping a record of the belongings was important to safeguard them from foreign trespassing as the Turkish authorities had entitled the Turkish population of the city to take ownership of Armenian belongings after the population's deportation.

The presence of the Russian army enabled those who had taken refuge in remote mountainous areas to return to Trabizon at a daily rate of some 200-300. However, due to food shortages these people were transported to Russia.

After the 1917 February Revolution the attitude of the Russian authories gradually improved. They allowed the Armenians to manage their houses and belongings. The schools in the city started functioning, and life started to pick up. But the Bolshevik revolution changed the whole situation. In February 1918, after the Russian army quit the Russian-Turkish front, the Turkish forces advanced forcing the Trabizon Armenians to leave.

The documents published in this article shed light on the rescue operation of the 1916-17 genocide survivors in Trabizon.